

## ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ՎԵՑԱՒՐԵԱՅ»-Ի ԳՆՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՆԱԼ

Կիմ Մուրադեանը 1976 թ. երեւանում լոյս ընծայեց «Բարսեղ Կեսարացիին եւ նրա "Վեցօրեան" հայ մատենագրութեան մէջ» ուսումնասիրութիւնը եւ 1984-ին նոյն Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցարեայ արարչութեան» ճառերի քննական քնադիրը, որի հիմքում ընկած են գոյութիւն ունեցող 31 ընդօրինակութիւններից 20-ը: Միայն քննական քնադիրն է մեզ հետաքրքրում. ուստի նախորդ հրատարակութեանը եւ սոյնի առաջաբանին չենք անդրադառնալ: Բնագիրը սողատուած է, որով էջերի եւ տողերի համարները ստորեւ գատեցինք (.)-ով: Ելակէտ ենք ընդունում առաջաբանի էջ ԺԲ-ի հետեւեալ տողերը, որոնք վերաբերում են դասական գրաբարով թարգմանուած կամ գրուած որեւէ քնադրի քննական հրատարակութեան. «"Վեցարեայ"ի հայերէն թարգմանութիւնը շօշափելի նըպաստ կարող է բերել դասական հայերէնի օրինաչափութիւնների, քերականական համակարգի, հոլովական-խնդրատական ինքնատիպութիւնների, ինչպէս նաեւ քառական նորոյթների իմաստով»: Բնագիրը քննարկեցինք այս նկատառումներով: Առաջաբանի «Սոյն հրատարակութեան սկզբունքները» հատուածում (էջ 10-11Բ) չենք գրտնում հետեւեալ վական հարցի պատասխանը. ի՞նչ է ներկայացնում հիմնական քնադիրը. դա մէ՞կ ձեռագրի քնադիրն է, որ սրբագրուել է միւսների տուեալներով, թէ բոլորի հիման վրայ կազմուած լոկ ձեռագրային «քննական-համեմատական քնադիր» է, ինչպէս կոչուած է էջ 10-ում: Այլընթեքումների քաժնի մասին ասուած է. «Տողատակի ծանրաբեռնուածութիւնից խուսափելու նպատակով, այլընթեքումները կազմելիս, առաջնորդուել ենք ոչ թէ ամէն ինչ անխտիր արտացոյցելու սկզբունքով, այլ միայն որոշակի ընտրութեան եղանակով» (էջ 10). ո՞վ կարող է երաշխաւորել, թէ այդ ընտրութիւնը ճիշտ է կատարուել, եւ ընթերցողն անտեղեակ չի մնացել արժէքաւոր այլընթեքումների:

Բնագրում շատ կան բանավիճելի ընթերցողաձններ, բայց նշում ենք եւ քննարկում ամէնից աչքառուները:

## ՃԱՌ Ա

1. Էջ 1, խորագիր՝ «Սրբոյ Բարսղի Եպիսկոպոսապետի կեսարոյ կապաղովկացոյ Յաղագս վեցարեայ աւուրց»։ Ճառ Ա-ի ծան. 1-ում ասուած է՝ «Նախընտրեցինք Հնադոյն գրչագրի խորագիրը, որը անհամեմատ մօտ է ու հարազատ բնագրին», որին ընթերցողը մնում է անտեղեակ։ Սրան թիւրիմացութեան մէջ են դցում այս խորագիրը, որ բնագրին է տրուած, եւ հրատարակութեան տրուածը՝ «Յաղագս վեցարեայ արարչութեան»։ Եթէ հեղինակի անունը Բարսեղ է, դասական գրաբարում սեռականը չի կարող լինել Բարսղի, —ի տղամար, որ լոկ միջնադարեան է։ Եթէ ուղղականը կեսարիա է, դասական գրաբարում սեռականը չի կարող լինել կեսարոյ, այլ՝ կեսարիայ։ Վեցարեայ աւուրց—ը դժուար թէ դասական գրաբարում ասուէր. յն. 'εξ᾿αἰμερον-ը բառարանում բացատրուած է «վեց օրուայ ժամանակաշրջան», փակագծերում աւելցուած է «Արարչութեան»։ Ճառ Ա-ի ծան. 1-ում ասուած է. «“վեցարեայ”ի հայերէն թարգմանութիւնը բոլոր ճառերի համար ունի միեւնոյն խորագիր—ճանուցումը՝ “վասն վեցարեայ աւուրց արարչութեան”»։ Ինչո՞ւ ուրեմն անտեսել արարչութեան բառը, որ անիմաստ վեցարեայ աւուրց—ին իմաստ է տալիս։

2. 1.1 Ի գրոց. յաջորդ մէջըբերումից երեւում է, որ սա Սուրբ գիրքն է կամ Աստուածաշունչ գիրքը։ Յատակութեան համար նպատակաբար է, որ քննական քննարկերում ընդունենք զլիսագրով Գիրք ուղղագրութիւնը, անկախ իւրաքանչիւրիս կրօնական համոզմունքներից։ Նոյնպէս գրել Գիրք։

3. 1.2 Սկիզբն այս. տ. 4 սկիզբն այս. որեւէ ձեռ—ում նախորդում էլ —ա յօդը չկա՞յ արդեօք։ Սովորականը՝ —ա յօդ եւ ետագաս այս որոշիչ։

4. 1.4 «... զմամնէ։ Քանզի»։ կէտադրութեան երեւանեան կանոնների համաձայն, որոնց պէտք է հետեւէր հրատարակողը, ստորագասական շաղկապից առաջ (,) է դրում։ Այս կանոնը բազմիցս խախտուած է քննարկում, ինչպէս տ. 5-ում՝ «... Աստուած։ Զի...»։ Բնագրի կէտադրութիւնը այլանդակութիւն է եւ խանգարիչ (տե՛ս գիրք. 319)։

5. 1.4 «Քանզի զիա՞րդ ոչ ցանկալի է»։ անհրաժեշտ է զիա՞րդ, ինչ. տ. 2-ում կարդում ենք «Քանի՞ վայելուչ է եւ գեղեցիկ...»։

6. 1.5-7 «Զի գարարածս երկնի եւ երկրի կարգելով եւ պատմելով առ քնակիչս աշխարհի, թէ ոչ ինքն յամնն գտաւ այնպէս»։ գարարածս այստեղ հաւանաբար նշանակում է «արարչագործումը»։ ուստի որեւէ ձեռ. չունի՞ առանց —ա-ի ձեւը։ — կարգելով եւ—ի փի

նախընտրելի է մի ձեռն-ի կարգելոց էր-ը, որի հետ յարմար է պատմելով. թէ է՛ք՝ գործիականով դրուած երկու անորոշ դերբայներն անյարիբ են գտաւ ստորոգեալի հետ: — Յանձնս-ի փխ պէտք է երկու ձեռն-ի յանձնէ, որ վերաբերում է նախորդ աշխարհի բառմաստին: Յանձնէ բացառականն անձնական դերանունն իմաստով սովորական է դասական գրարարում:

7. 1. 9-10 «Արդ՝ որպիսի՞ ունին փաւական իցէ արժանի լինելով լսել զմեծապատում ճառս ընթերցուածոց, գոր ընթերցան» . լաւագոյն է երեք ձեռն-ի ընթերցուածոցս որոշեալը, եւ գոր ընթերցան-ի փխ, որի ենթական յայտնի է՛ք, նախընտրելի է երկու ձեռագրի որ[ք] ընթերցան-ը: էջ 2 տ. 4-ում ունենք «ի վերայ քանիցն, որ ասացան», 2. 11-ում «ընդ քանսն, որ պատմեցան»:

8. 1. 10-13 «Որպիսի՞ միտք ժամանեցեն [․․․] եմք: Բայց եթէ, որ սրբեալք եւ գղաստացեալք իցեն․․․» . բայց-ից առաջ անպայման (,) պիտի դրուէր. (:)-ը անտեղի հատել է նախադասութիւնը երկու մասի եւ իմաստը խաթարել: Բայց Եթէ-ն այստեղ նչ. «այլ միայն»: — Որ-ից առաջ (,)-ն աւելորդ է:

9. 1. 12-13 «Որ սրբեալք եւ գղաստացեալք իցեն ի կարեաց մարմնաւորաց, եւ չիցեն լեալք ի հոգս․․․» . միանշամայն անտեղի է (,)-ը եւ-ից առաջ, քանի որ ստորոգեալների ենթական նոյնն է՝ որ: Նոյնը՝ 2. 3 եւ-ից առաջ: Բնագրում երեւանեան կէտադրութեան կանոնների դէմ մեղանշումներ շատ ու շատ կան քնադրում: Առաւել եւս դատապարտելի է քնադրում անհրաժեշտ կէտադրութեան նշանների բացակայութիւնը, որ իմաստի խանգարիչ է դառնում:

10. 2.1 Յորժամ-ից առաջ (: ) պէտք է՛ք, քանի որ նախորդ նախադասութեան շարունակութիւնն է (տե՛ս քնադիրը):

11. 2. 1-2 «Մի վաստակս բարեաց եւ հաճոյս առաքինութեանց դուն եղեալ մարտնչիցին» . հաճոյս աննախդիր հայցականը անպատճառն է. որեւէ ձեռ. չունի՞ արդեօք ի հաճոյս: Սրան էլ չի կարող վերաբերել ի վաստակս-ի ի-ն:

12. 2. 3-4 «Դէտ յանձնին ինքնին լինիցին, զի միտս արժանաւորս Աստուծոյ առցէ ի վերայ քանիցն, որ ասացան» . յանձնին եւ ինքնին եղակիներն անյարիբ են լինիցին յոգնակիի հետ, որին չի յարմարում նաեւ առցէ եղակին: Զեռագրերի տուեալներով յարմար ենք համարում «դէտ յանձնն ի քննին լիցի», որ մօտաւորապէս նչ. «Իւրաքանչիւրն ինքը զննող լինի ինքն իր մէջ», որին չի խանգարի առցէ եղակին: — Աստուծոյ-ի փխ սպասելի էր «յԱստուածոյ առցէ»:

13. 2. 15-16 «զի որդէգիրս առցէ» . մէկ ձեռ. ունի յորդէգիրս ճիշտ ձեւը, որ պիտի գրուի -ե- -ով՝ յորդէգիրս. «Յորդէգիրս առեալ

ժառանգ՝ իւր անձին փոխանակ կացուցանէ» (Բ Մակ ԺԴ 26) . դարձուածքներում ունենք յորդեգիրս :

14. 3.1 «Զմեծ պատիւ սպասս թաղաւորութեանն՝ [...] անարգէք» . մէկ ձեռ . ունի գմեծապատիւ ճիշտ ձեւը . այս ածականը կայ նաեւ Սուրբ գրքում (այսուհետեւ՝ ՄԳ) :

15. 3.9-10 «Վասն պահանջելոյ վրիժուցն չարագործացն յաստիճան մահու հասանէք» Մովսէս . իմաստը պահանջում է [ի] չարագործացն , որ ձեռ-երից մէկում կա՞յ արդեօք :

16. 3.10-11 «Որում վասն բարի գործոցն , զոր գործէր ոչ առ չարագործան , գոր եղեւ փախուստն ի նոցանէ» . Երեք ձեռ . ունեն ընդդժուած գոր-ը , որ բոլորովին անտեղի է եւ աւելորդ , քանի որ ուրիշ ստորոգեալի էլ չի վերաբերում երկար նախադասութեան մէջ , կամ չլ նախապէս որոյ էր :

17. 3.19 «Որպէս մարթիցէ տեսանել մարդոյ զաներեւոյթ մեծութիւնն» . ընդդժուածք , որն անշուշտ միահետ գրութեամբ է ձեռ-ում , միադիմի մարթիցէ պիտի կարդացուի մարդոյ տրականի հետ : Սխալ չէր լինի մարթից[ի]-ն :

18. 3.22 Երբէք . միշտ սերելի է երբեք , քանի որ վերջածանցն է -եք , ինչպէս ուրեք եւ այլ բառերում : Բնագրում ընդունուել է միայն երբէք :

19. 6.5 «Ի մանրամաղ եւ անզաւր փռուցն առին սկիզբն հաստատեք» . 5.17 եզակի փռոյի մանրամաղ , տ . 18-19 ի մանրամաղ փռուցն . այդ յոգնակին անյարիբ է եզակիներին : Մէկ ձեռ . ունի փռուցն , Երկուսը՝ փռուցն եզակիները . պիտի ընտրուէր ի փռուցն եզակին : — Ճիշտը կը լինէր հաստատելոյ սեռականը . «Որ սկիզբն առ խաւելոյ ի Տեառնէ» (Ա ս 368) :

20. 7.3-5 «Զի , զոր աւրինակ [...] վատնէ : Այնպէս եւ արարիչն» . Զի-ից առաջ , ինչպէս եւ Այնպէս-ից առաջ դրուած (:) -ը պիտի լինէր (,) :

21. 7.13-14 «Գուցէ յորժամ մարդկեղէն մտաւք կամիցիս իրնդրի՝ վրիպեալ դտանիցիս» . կէտադրութեան արդի կանոնները պահանջում են (,) գնել քուլթի փոխարէն , որ Մխիթարեան հրատարակութեանն է : (,) -ի փխ (') է դորժածուել նաեւ շատ ուրիշ տեղերում , ինչպէս 14.6-8-ում :

22. 8.9-10 «Զքեւ ի վերայ թո անցանն ի շրջելն իւրեանց» . Թոռն . Բ , 4 , ծան . 29 նկատել է տալիս եւ-ի անհրաժեշտութիւնը գեւ-ից յետոյ , փաստարկելով տ . 13 «որ ի վերայ մեր եւ զմեաւք շրջին»-ի եւ-ը : Եթէ որեւէ ձեռ-ում չկայ այդ եւ-ը , կարելի էր ընդմիջարկել անհրաժեշտ ծանօթութեամբ :

23. 8.11-12 «Զէ դիւրին մտաց մերոց կալ ի վերայ ի սկզբան աշխարհիս» . Թոռն . Բ , 5 , Ժան . 30 իրաւամբ սեռական ունի կալ ի վերայ իրիք դարձուածքում եւ բնագրում՝ ի վերայ սկզբան, առանց աւելորդ ի նախդրի . «Յի վերայ չափոցն աստեղաց կացին» (11. 18-19), «Յի վերայ չափոյ տեղեաց նոցա . . . կացին» (12. 5-6) :

24. 8.15 Յուսմէ . Թոռն . Բ , 49 5 ունի ճիշտ յուսմէ ձեւը . եթէ սա անխտիր բոլոր Ձեռ-երում է , ուղղելի է ծանօթութեամբ : Կարծում ենք , որ կարելի է սրբադրել ձեռագրերի ակնյայտ վրիպակները , իհարկէ զգուշացնելով ընթերցողին : Չկայլո՞ն ձեռագրեր , որոնք ունենան յուսմէ : Չգիտենք :

25. 9.9 «Որ ի վերայ մերն եւ զմեաք շրջին» . յօդն աւելորդ է ըստ 8.13 «որ ի վերայ մեր եւ զմեաք շրջին»-ի :

26. 10.6 Տուրնջեան . -ը--ով տարածուած սխալագրութիւնը պէտք է ուղղել եւ այդ ձայնաւորը գուրս հանել , քանի որ վկայուած են առանց սրբան ճիշտ գրելածներ : Որոշ ձեռագրեր չունեն՞ն տունջեան ճիշտ ձեւը :

27. 12.4 «Նկարոց աստեղաց եղեն մեկնիչք» . Թոռն . Բ , 8 նկարոյ , սակայն այս դոյականը դաստիան գրաբարում ՈՒ հոլովման է , եւ մէկ ձեռ . ունի այստեղ նկարուց ճիշտ ձեւը :

28. 12.15 «Հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց յաշխարհն հանդերձեալ» . Թոռն . Բ , 9 եւս ունի յաշխարհն , որ պիտի լինէր յաշխարհին , ներգոյական :

29. 13.2 «Որով եմք ի կենդանիքս» . Թոռն . Բ , 9 ունի քերականորէն միակ ճիշտ ձեւն առանց ի նախդրի , որ նա ջնջել է ծան . 22-ում զգուշացնելով , քանի որ ուղղական հոլովը չի գործածուում որեւէ նախդրի հետ : -Ս-ն յօդ 4 :

30. 13.13 «Բայց զայս գիտեմք , սիրելիք , դի» . պէտք է մոռանալ վերջականների շեշտը՝ սիրելիք , որ բնագրում աւելորդ է համարուել ամենուրեք :

31. 14.6 Փախչելի . մէկ ձեռ . ունի փախչել ստոյգ ձեւը . վաղուց ապացուցուած է , որ դասական գրաբարում ի լծորդութեան բայերի անորոշ գերբայը վերջանում է -ել-ով : Բնագրում , ղգախտաբար , այս ճշմարտութիւնը անտեսուել է այլուր եւս եւ միշտ :

32. 14.9 «Ինչ որ սկսանի» . առատ է բնագրում , սխալ որ ինչ , ինչպէս 15.6 գոր ինչ :

33. 14.13-14 «Բոռն հարեալ ունիցին զմիմեանց մի ըստ միովէ ազգն , որ միմեամբք փոփոխին , որ շարժին եւ անցուցանեն զմիմեանս» . հինգ ձեռ . ունեն ազգք յօդնակի եւ ճիշտ թրուով ենթական յոգնակի ստորոգեալների հետ , որ տիրապետողն է ՍԳ-ի բնագրում :

34. 14. 15 «Ըստ իւրաքանչիւր շարժումն ժամանակացն» . երկու ձեռագիր ունեն ըստ-ի եղակի խնդրի ճիշտ հոլովածեւը՝ եղակի տրական, շարժման:

35. 14. 19 «Բարիոբ ուսաք» . երեք ձեռ. ունեն բարոբ ճիշտ գրութիւնը: Բնագրում երբեմն կայ բարոբ է, ինչպէս 89. 17, 91. 14, բայց գերակշռողը սխալ բարիոբ-ն է:

36. 15. 17 «Նայեաց, տես» . ինչպէս կոչականների, այնպէս էլ բայի հրամայականի շեշտը անտեսուած է բնագրում: Յայտնի է, որ անցեալ կատարելի եղակի երրորդ դէմքը եւ եղակի հրամայականը կարող են ձեւով նոյնը լինել որոշ քայերի համար, եւ ( ' )-ը վը լինի տարբերակիչ նշան:

37. 16. 9-10 «Ձիք ինչ, որ զնայ եւ անցանէ, եթէ ո՛չ սկիզբն իցէ դնացից նոցա» . 14 ձեռ. ունեն նորա ճիշտ եղակին ըստ ինչ եղակի: — Ո՛չ-ի շեշտն աւելորդ է. ուրիշ տողերում էլ անտեղի ( ' ) է ստացել (19. 14):

38. 16. 12 «Վարես կալ ի վերայ այնց, որ ոչ ունի կատարումն» . այնց յոգնակիի փխ անհրատեշտ է այնր եղակին, կամ էլ ունի-ն պիտի լինի յոգնակի՝ ունին: Էջատակում ձեռագրային այլընթեքցում չկայ այս երկու բառերի համար:

39. էջ 16-17 «Յի միտ առնուլ զպատշաճս անբեւոյքսն Աստուծոյ» . երկու ձեռագիր ունեն անբեւուքիւն, որն անշուշտ նախապէս անբեւուքիւն էր, տեռական, ինչպէս Աստու[ա]ծոյ-ն: «Ծանաթք անբեւուքիւն Աստու[ա]ծոյ լինիցին» (Ադ 165), «Որ տ պատկեր անբեւուքիւն Աստուծոյ» (Կող Ա. 15): Նոյն սխալը՝ 320. 2:

40. 18. 4 «Եւ զայս զի ասացի, զի ուսցուք եւ մեք զկամսն Աստուծոյ» . առաջին զի-ն, այս կէտադրութեամբ, մեզ աւելորդ է թըւում. ձեռագրային տարբերակ չկայ: Գուցէ զի՞ է՝ «ինչո՞ւ», հոնտորական հարցի ձեւով:

41. 18. 14-16 «Կէսք [...] երեւին: Որ [...] հաստատին, կան մնան [...] եւ որ աչաւքն երեւի, անդամաւք կատարի շարժումն նուազացն նոցա» . ճիշտ է երկու ձեռ-ի երեւին յոգնակին, որ յարմար է յոգնակի միւս ստորոգեալներին:

42. էջ 18-19 «Իսկ որ արուեստք արդեամբք հաստատին...» . սր-ը կամ արուեստք-ն աւելորդ է:

43. 20. 16 «Ձի մի ըստ միոջէ ի մի մի՛ արասցէ» . ճիշտը՝ ի մի մի, առանց ( ' )-ի:

44. 21. 17-20 «Բնութիւն ջրոյ ընդ ամենայն երակս երկրի բաշխեալ է, որպէս յանդիման ցուցանեն, որ ջրհորս փորեն, զի ինքեանք ի վերայ ինքեանց ի վերայ երկրի գտանին» . ճիշտ է 4 ձեռ-ի ջուրց

յողնակին, ինչպէս պահանջում են իմֆեանֆ,- իմֆեանց եւ գտանիմ յողնակինները : — Ի վերայ-ի փխ ճիշտ է Երկու ձեռ-ի ի վերոյ-ն. ջրերը ոչ թէ իրար վրայ են, այլ՝ իրարից վեր, իրար վերեւում, հողի տար-րեր եւ իրար վրայ դիզուած շերտերում : — Տողատակում թէեւ չկայ, լայց իմֆեանց-ից յետոյ անհրաժեշտ է [եւ] շարկապը : — Երկրի-ից յետոյ տեղին են 13 ձեռ-ի եւ ի մէջ երկրի քառերը : Եզնիկն էլ ունի այն միտքը, թէ ջրերը երկրի վրայ եւ երկրի միջում են :

45. 22. 4 «Երկինք դարձեալ բնութիւնֆ գրարձրարերձ բարձանց զտեղիս ունին, եւ երկիր բնութեամբ զստորին կողմն սանդարամե-տաց ունի» . բնութիւնֆ-ը պիտի լինի բնութեամբ, որ 2 ձեռ-ում է (մէկն ունի բնակութեամբ), ինչպէս ցոյց է տալիս նախադասութեան բնութեամբ-ը : Թոռն . , Բ , 14, բնութեամբ :

46. 22.11-13 «Արդ՝ մի՛ խնդրեցես զմեկնութիւն իւրաքանչիւր պատմութեանցն յայնցանէ, որք հաստատեցանն յաշխարհի, այլ յորոց լուսինն դիրք այնոքիւք, որ մեկնեցանն ճանաչին» . յայնցանէ-ն ըստ մեղ [զ]այնցանէ «ճարանց մասին» էր, որ տողատակում չկայ . նոյնպէս եւ յորոց-ը [զ]որոց էր, թէեւ մի ձեռ . ունեն որոց եւ արք : Թոռն . , Բ , 14, [զ]որոց : — Կէտադրական սխալներ կան :

47. 24. 3 «... զբնութիւնսն, որ ունի զըրոյնս...» . ճիշտը վը լի-նէր ունի[մ] յողնակին, քանի որ յարաբերեալը՝ գրմութիւնսն, յող-նակի է :

48. 24. 6-7 «Պ միջոյ բառնալ գլոյնս երեւեկացն, որ արար զթուխն...» . երկու ձեռ . ունեն արարան, որ մեղ ուղիղն է թւում, յողնակի, մէկ ձեռ-ի եւ-ի հետ՝ եւ որ արարան, քանի որ յաջոր-դում են ուրիշ յողնակի հայցականներ :

49. 24. 9-10 «Զիք ինչ, որ կայցէ մնայցէ ի գիտելոց արարա-ծոց» . ճիշտն է մէկ ձեռ-ի գիտելոյ-ն՝ գիտել «գիտենալ, ճանաչել» անորոշ զերբայի բացառականը :

50. 24. 13-15 «Յէ՞ր վերայ վայցէ երկիրս կամ՝ յէ՞ր վերայ հաս-տատեալ եղեալ իցենն զհիմունս սորա» . ճիշտ է մէկ Զ-ի հիմունֆ-ը : Եթէ եղեալ իցեն-ը կրաւորական սեռի է, ինչպէս կարծում ենք, պա-հանջում է ուղղական հոլովով ենթակայ՝ հիմունֆ : Իսկ եթէ «հաս-տատեալ եղեալ»-ի ենթական արարիչն է, անհրաժեշտ է իցէ եղա-կին, որ երկու ձեռ-ում է :

51. 24. 17-18 «Մարթէիւր [...] հաստատել վալ ի ճշդիւտ ուր-մարտութիւն» . ճիշտ է մէկ Զ-ի ի ուրմարտութեանն ներգոյականը, ինչպէս պահանջում են հաստատել կալ-ը : Մէկ ձեռ . եւ տպ-ն ունեն հասանել, որի հետ ճիշտ կը լինէր հայցականը առանց կալ-ի :

52. 25. 16 «Եւ նա, որ զնոսայն ի վեր ունի, պիտոյ էր ինչ մի, որ եւ գնա...» . ճիշտ է կա՛մ 7 Զ-ի նմա, կա՛մ Երեքի այնմ տրականը՝

պիտոյ է միադէմիի խնդիրը, ինչպէս 26.5 «Սակայն եւ նմա պիտոյ է ինչ մի, որ եւ զնա ի վեր ունիցի»:

53. 26. 8-9 «Անպատասպարան դիւտիւքն մերովք աստանդու-  
քիւնքն աստակար իրացն մերոց առնեմք». ճիշտ է մէկ Զ-ի աս-  
տանդուքիւն եղակի հայցականը: — Հաւանաբար աւելի յարմար է  
հրկու ձեռագրի «իրացն մտաց մերոց»-ը:

54. 26. 13 «Ելանիցէ մեղ դէպ քանն, որ եղեւ առ Յովք». ճիշտ  
է ի դէպ-ը, որ տողատակում է եւ նշանակում է «յարմար է դալիս».  
«Ի դէպ ելանէ նոցա աստուածական քարքառն» (Եզն 1959, 55. 13-14,  
92. 13-14):

55. 27. 6 «Եթէ զինքն ինքն ունիցի գերկիր դիւր անձն ի վեր,  
դարձեալ տարակուսեալ ի վարանս մտեալ խնդրիցես, թէ զհարդ-  
իւնքն զինքն ունիցի ի վեր՝ զայն ոչ դիտիցես». տ. 11 «Եթէ քրկիր ինքն  
զինքն ունիցի ի վեր». «զինքն ինքն»-ի փխ մէկ ձեւ. ունի ինքն զինքն,  
որ ճիշտն է եւ նոյնն է, յաջորդ երկու իքն զինքն-ի հետ: Զերկիր հայ-  
ցականը, որ տարբերակ չունի. էջատակում, պիտի լինի ուղղական՝  
երկիր, ինչպէս տ. 11-ում:

56. 28. 1-2 «Զայս ածցուք զմտաւ եւ ի նոյն թեւակոխեսցուք,  
վի մեզ ի զոռչութիւն լինիցիմ». սրա —ն դիրը որպէս յօ՞ղ պիտի ըն-  
դունուի:

57. 28. 5 Փուսիկեամբ. դրարարի բառարաններն ունեն փիւսի-  
կեամ կամ փիւսկեամ, իսկ Հ. Աճառեանն իր արմատական բառարա-  
նում՝ «փիւսիկեամ ... որ եւ փիւսկեամ». փուսկեամ-ը արտասանելի  
չէ, թէեւ «Աւելի կանոնաւոր կ'ըլլար գրել հւսիսայ» («Յերականու-  
քիւն հայկազնեամ լեզուի», էջ 478, Զ):

58. 28. 18 «Առփիւք հաստատեալ կայ». ճիշտը՝ սոփիւք, —ք-  
հոլովակերտով:

59. 28. 20-21 «Ի վեր հայի շարժել եւ վերանալ, եւ ինչ, որ  
ծանր է, ի խոնարհ հայի ի ձգել իջանել». կամ [ի] շարժել, կամ՝  
[ ] ձգել: Գուցէ՛ հակ[ի]. Եզն 85. 23 «ոչ տայ վերանալ եւ ոչ ի խո-  
նարհ հակել»: Բայց հայի 30. 9-10-ում կայ:

60. 29. 7 «Եթէ հաւանեցուցիչ թուիցին քեզ այս, որք ասա-  
ցանս». անտեղի այս եզակիի փխ երկու ձեւ. ունեն բանքս, որ ճիշտ  
է քերականութեան համար: \*Այս դերանունն չկայ. քացառուած է  
այսոփիկ-ը այստեղ:

61. 30. 7-9 «Ամենայն ինչ, որ պարզ բնութիւն է, ըստ շար-  
ժումն իւրոյ բնութեանն է յատուկ եւ ամենայն իրք, որ թեթեւ է,  
ի վեր հայի սնացք իւր». ըստ նախորդի եզակի խնդիրը տրական է  
գոյականների եզակիում. ուստի՝ ըստ շարժման, որ երեք ձեւ-ում

է, թէեւ սրանով հանդերձ նախադասութեան առաջին մասի միտքը յստակ չէ մեզ համար: — Իրք-ի փխ նախընտրում ենք երկու ձեռ-ի իրիք սեռականը: — Հայի եզակիի փխ ապասելի էր հայի[ն] յոգնակին՝ գնացք անեղականի հետ որպէս անթակար:

62. 30. 12 «Որք չըջին եւ պատին գմիմեամբն». ճիշտն է մէկ ձեռ-ի գմիմեամբք յոգնակին. փոխադարձ անձնական դերանունները չեն կարող եղակի թիւ ունենալ:

63. 32. 4-5 «Մեք մի՛ հաւանսեցուք երկրորդել զայն, քանզի վնասեն». անյարիր են զայն եզակին ու վնասն յոգնակին. տարբերակ չկայ. դուցէ՛ զայն[ս]:

### ՃԱՌ Բ

64. 35. 2-3 «Թէպէտեւ յոյժ վրիպեալ գտանիցիմք կատարեալ մտաց մեծապատում առաւելութեան նոցա». ճիշտ է երեք ձեռ-ի ի նախդիրը կատարեալ-ից առաջ, որով մտացը դառնում է բացառական խնդիր վրիպեալ գտանիմ դարձուածքի համար:

65. 35. 11-12 «Երկինք եւ Երկիր միով հաւանութեամբ միանդամայն առին զԻւրաքանչիւր արարածոց». ճիշտ է 7 ձեռ-ի արարած «ստեղծում» հայցականը, փխ. արարածոց անյարիր սեռական-տրականի:

66. 35. 12-13 «Երկինք ընկալան զկատարումն արարածոց իւրեանց». արարածոյ փխ արարածոց. ոչ մի ձեռ. չունի մեր առաջարկածը: Այլ քնադրերում եւս կայ արարածք «ստեղծում», քայց հաւանաբար դասական չէ:

67. Էջ 35-36 «Ծաղիկք իւրաքանչիւր մեծապայծառ երփն երփն գումոց, եւ մարդք ըստ իւրաքանչիւր անուշահոտ խոտոցն՝ եւ արմատք ըստ իւրաքանչիւր համահամն ճաշակաց». երկու ձեռ. ունեն մեծապայծառ-ին նախորդելիք ըստ-ը, ինչ. յաջորդ միւս երկու ըստ-երը. Թոռն. 15-ն ունի այս ըստ-ը:

68. 37. 16 «Ձնոյն գիւղայն, այսինքն զնիւթն առ, ասեն, Աստուած». տ. 14-ում կայ գիւղէ, եւ այստեղ մէկ ձեռ. ունի հիւլէն. ճիշտն է ուրեմն գիւղէն փխ գիւղայն, որ ոչ մի Կոլովածեւ չէ: Մի անգամ ընդմիջտ ընդունելով, որ այս գոյականի ուղղականն է հիւղէ, ինչ. 38.3 կայ գիւղէ ճիշտ հայցականը, սխալ պէտք է համարել հիւղ ուղղականը, որ կարողում ենք 38.1-ում:

69. 38. 5 «Առանց կերպարանց»-ի մէջ վրիպակ կայ, Երեւի, փխ կերպարանաց: Նոյնը՝ 225. 6 եւ 8: Բնադրում (225. 5) կայ կերպարանաց:

70. 39. 9 «Սո՞ յնպէս եւ Վլաստուծոյ պարտեցիմք կարծել արդարեաւ՝ քաւ լիցի»։ Առձեռնը չունի արդարեաւ. կայ արդարեւ։ Վե՛նետիկեան հրատ.՝ն ունի այստեղ արդեւ, ինչ. մի ձեռ.՝, եւ ճիշտը սա է, որ ընադրում արդեաւ է։

71. 39. 19 Էստ. ոչ մի ձեռ. չունի՞ առ ճիշտ ձեւը. ա-ի առաջ է- աճականը դասական դրաբարին յատուկ չէ, ինչ. սովորեցնում է Մէյէն (Esquisse, փջ 124)։ 295.1-2 «Շունչ [...] ա՛ն հրաման»։ ա՛ն-ի շեշտն աւելորդ է։ 86.7 դարձեալ էստ։

72. 39. 20 «Այսու բանիւք յուրացութիւն յվաստուծոյ առնէին, եւ յամենայնէ, որ...»։ ճիշտն է մէկ ձեռ-ի ուրացութիւն անորոշ հայցականը։ Ճիշտ կը լինի նաեւ գուրացութիւն, ինչ. «Ոյք առնէին գուրացութիւն, ատեցի» (Սաղ ձ 3)։

73. 41. 9 «Կապեալ պապանձեսցին»։ 4 ձեռ. ունեն կարկեալ ճիշտ բառը. կարկիւմ նշ. «պապանձի», որով ստացում է հոմանիշների միատեղ գործածութիւն, որ սիրելի է դասական դրաբարին։

74. 42. 10 Ի յաւոյ. անընդունելի է կրկնակ ի յ- նախդիրը. ի-ն միանդամա՛ն աւելորդ է, եւ ձեռ-երում պէտք է որոնել ճիշտը։

75. 42. 13 14 «Արդ՝ մնաց մեզ մի պատմութիւն, որով ցուցցէ զհանդէս առաքինութեան մտաց մերոց ի մի պատճառն, որ մնաց»։ ո՞վ է ցուցցէ ներդրածականի ձեռնական։ Ըստ մեզ՝ նախապէս էր «որով ցուցց[ի] [ ] համդէս», որ էջատակում չկայ։ Ընդունելի կը լինէր նաեւ որ[ ] ցուցցէ գհամդէս։

76 42. 15-16 «Արդ՝ քանզի ոչ ասացի, թէ՛ արար Վաստուած ըդ- ջուրս, ասաց, ասէ՛՝ «Երկիր աներեւոյթ էր»»։ ասացի-ն պիտի լինի ասաց, որ երկու ձեռ-ում է. ենթական Գիրն է։ Թէ՛-ի (՛)-ը միան- դամայն աւելորդ է։

77. 42. 17-18 «Միացիս, թէ զի՞նչ էր, որով ծածկեալ էր գեր- կիր եւ էր աներեւոյթ»։ ճիշտն է երկիր ուղղականը, որ էջատակում չկայ, սակայն 43. 2 «Ասել, թէ աւելով ծածկեալ էր երկիր՝ անմամն է»։

78. 45. 5 «Հարին խմամ եւ հատին հաւատս ի հաւտից Քրիս- տոսի»։ 10 ձեռ. ունեն խրամ ճիշտ բառը փիս խմամ։ Թէեւ էջատա- կում չկայ, քայց ճիշտ քայլը հատին է. ասուել է ակամ հատամել, խրամ հատամել։

79. 45. 13-14 «Պատճառս ի վորուստ կենաց ձերոց կարկատէք ձեզ ձերոցդ ամձամբ»։ ընդդժուածն անքերական, անհամաձայնու- թիւն է. ձեռ-եր ունեն ձերով, ձերոյին, ձերոյինդ, ձերովդ, որոնք էջատակում տ. 13-ի ձերոց-ի համար են նշուած, բայց տ. 14-ի ձերոցդ-ի փիս ճիշտ ձեւը դրանցում է, ամձամբ եղակի դործիականի հետ։

80. 46. 13-14 «Մինն առաքինութեամբ իւրով կորուսի է ընկե-  
րին իւրում» . տրական իւրում-ի փխ իւրոյ ճիշտ սեռականը երկու  
ձեռնում է : Հմմտ . «սպառիչ նորա լինի» (46. 18) . -իչ վերջածանցով  
բառերը դոյականներ են եւ ըստ այսմ սեռական հոլովով յատկացու-  
ցիչ են պահանջում :

81. 47. 7 «Ես զարմացեալ եմ ընդ նոցա, թէ...» . ընդ նոցա նշ .  
«նրանց փոխարէն», սակայն իսկական իմաստը պիտի լինի երեւի  
«նրանց վրայ», զասական գրաբարով ընդ նոցա, որ ունեն երեք ձե-  
ռագիր : Հմմտ . 229. 6 «Ընդ այս ւ զարմանք», 303. 3 «Զարմանք մե-  
ծասքանչ են ընդ ընտրողութիւնն», «Այլ ընդ այն իսկ են զարմանք»  
(Ոսկ Ես 462. 4), «Զարմանային ընդ նա քշմամբին» (Ղեւտ ԻԶ 32),  
304. 1 «Ընդ այս ւ զարձեալ առաւել զարմանալ» :

82. 47. 7-13 «Զիա՞րդ ինքն ոչ յինքեանց յանձանց ակն ածեն» .  
մէկ ձեռն . ունի ինքեանք ճիշտ ձեւը, որ միանգամայն յարմարում է  
յաջորդ յողնակիներին :

83. 47. 10 «Կեանք զմահ ոչ ծնանի» . ճիշտ ձեւ ծնանի-ը, ըստ  
կեանք անեղականի, 4 ձեռնում է : Հմմտ . «Եղիցին կեանք քո կա-  
խեալ» (Բ Աւրէնք ԻԸ 66), «Զի՞ պիտոյ եմ դնաւ մեզ այս կեանք» (Ա  
Մակ Բ 13), «Փուք եմ կեանք իմ» (Յովք է 7) եւ այլն :

84. 40. 7-8 «Կանուխ է ասր լինելով եւ պիտոյիւք, քան զոստայ-  
նանկութիւն նորա, որում պիտոյ եղին» . ճիշտը մէկ ձեռն-ի եղեւ-ն  
է, քանի որ ենթական ասր-ն է :

### ՃԱՌ Գ

85. 64. 6-8 «Որ ինչ եղեւն ի նմա յերեկ, որչափ հասու եղաք,  
պատմեցաք զմեծասքանչ զարմանալիսն, որ եղեւ ի նմա» . յերեկ-ից  
յետոյ դրուած (,) -ը սրանից առաջ պիտի դրուի, թէ էջ այնպէս է  
ստացում, կարծես արարչագործութեան առաջին օրուայ սքանչե-  
լիքները երէկ են տեղի ունեցել . իրականում յերեկ-ը «երէկ» պատ-  
մեցաք-ի ժամանակի պարագան ւ, «ընկալայք ի մէնջ երեկ» կայ տ .  
8-ում : Ըստ Նճէ-ի՝ երեկ-ը գրուել է նաեւ երեկ, եւ յերեկ-ը յղում  
է երէկ քառասօղուածին : — Որ-ի յարաբերեալը զարմանալիսն գո-  
յականն է, որի եղակի իմաստով անեղական լինելու դէպքում էլ  
եղեւ-ը պիտի լինէր եղին (որ էջատակում չկայ) : Սակայն այս գո-  
յականն այստեղ յողնակի է, քանի որ արարչագործութեան առաջին  
օրը միայն մէկ «մեծասքանչ զարմանալիք» տեղի չի ունեցել, այլ՝  
չատ : Հմմտ . տ . 10 «Եկեսցուք եւ այսաւր փ սքանչելի գործս աւուրն  
երկրորդի» :

86. 66 1 «Զի ամենայնի յաջողեալք եւ երջանիկք զտղին ամենեքեան»․ ամենայնիւ կամ յամենայնի, բայց ոչ տրական. «Ամենայն իրաւ յաջողեալք» (Սբ 464), «Յաջողեալ եղեկիկա յամենայն ի գործն» (Բ Մնաց ԼԲ 30) : էջատակում ալլընթերցում չկայ :

87. 67. 9 «Կցին զան յաւդուած»․ թէ եւ ալլընթերցում չկայ, բայց ճիշտը կը լինէր [ի] յաւդուած կամ յաւդուած [f] : Յաւդուած-ը գոյական է :

88. 67. 11-12 «Մբբեւ անցանեն ընդ ամենայն գործի սպասաւորս բանին»․ ճիշտն է գործի[ս] յողնակին, որի որոշին է սպասաւորս. հմմտ. «Լեզու էր, որ բարխէր ընդ գործիսն» (56. 6) : Հրատարակիչը այս ճառի ծան. 3-ում գրել է՝ «Հմմտ. Նախնիք, էջ 1049-1050»․ Եւ իրօք էջ 1050-ում Նորայր Ն. Բիւզանդացին գրել է․ «Գործիս ուղղէ եւ Հ. Արս. Բագր.» : Գուցէ գործի եզակին վերիպակ է փխ գործիս : Հմմտ. «Յաւդապատ բանից աշտպիսի գործիք պիտոյ են առ ի հաստատուութիւն : Արդ՝ զինչ պիտոյ էին աշտպիսի գործիք» (69. 6-7) :

89. 69. 9-10 «Եւ այս ամենայն, որ յաւդապատ եւ մանրապատ բանիւք պատմեցան»․ որքան էլ աւելի զիտական եւ նուրբ երեւայ մանրապատ-ը, ճիշտն է բազմաթիւ ձեռագրերի մարմնապատ-ը, որ միանգամայն յարմարն է նախորդ յաւդապատ-ի հետ : — Ամենայն-ի ենթակայ լինելու դէպքում պատահում է, որ ստորոգեալը յողնակի դրուած լինի, ինչպէս այստեղ առանց ալլընթերցման, բայց մեզ կասկածելի է թուում, եւ մերժում ենք :

90. 70. 6-7 «Այս բանք այսպիսեաց են, որ առնեն զարարիչն կարաւ հիւղեայ»․ ճիշտ ընթերցուածը՝ այնպիսեացն, երեք ձեռ-ում է :

91. 70. 11-12 «Նախ ինքեանք հաւանեցին միմեանց՝ բռել եւ դադարել լինելոյ հակառակ ի միմեանց»․ լռել կամ դադարել բայը պահանջում է բացառական հոլովով անորոշ դերբայ, ինչպէս «Դադարեցին ի շինելոյ զքաղաքն» (Մն ժԱ 8), «ի ծծելոյ [․․․] չիք դադար» (82. 14-15)․ արդ՝ մէկ ձեռ. ունի ի լինելոյ, որ ճիշտ ընթերցուածն է : — Հակառակ ածականի վնդիբը լինում է տրական կամ սեռական. արդ՝ սրկու ձեռ. ունեն հակառակ միմեանց, որ ճիշտն է. հմմտ. «հակառակ ինձ» (Ա Թադ ՓԲ 15) : Հենց տ. 14 «հակառակ նոցանց լինին», «հակառակ միմեանց են» (80. 21) :

92. 70-71 «Մեք ոչ հիւղեայ եւ ոչ յայլ իմեքէ ասեմք արար Աստուած մի երկինս կամ երկուս»․ երկու ձեռ. ունեն ի հիւղեայ ճիշտը՝ բացառական, ինչպէս յայլ իմեքէ, որն ըստ մեզ պիտի լինէր յայլ[մէ] իմեքէ, որ էջատակում չկայ :

93. 71. 2-3 «Յոյժ գերբին եւ մեկին է ճշմարիտ Աստուծոյ մերոյ»․ ճիշտն է մերում, թէ եւ էջատակում չկայ, տրական : Դասական

բնագրերում յաճախ են շփոթուած ստացական արձանագրերի եղակի սեռական ու տրական հոլովածեւերը, ինչպէս այստեղ :

94. 71. 18-19 «Յափշտակեցաւ յերրորդ յերկինս» . էջատակում որպէս աղբիւր նշուած է «կորնթ II, ԺԲ 3» . պէտք է «այերէնից վանել հոմէական թուանշանները . տան համարը 2 է, ուր՝ «մինչեւ յերրորդ երկնից», որ էջատակում է մնացել :

95. 72. 2 «Ձոր ասեմք» . Երկու ձեռ . ունեն ասեմքս, որ նախընտրելի է :

96. 72. 4-5 «Ասեն նոքին, թէ Խաւքն բոլորակք եւ Խաւքն աստեղացն, որովք շրջինն» . ճիշտ եւ դասական ձեւն է Խաւքն, որ երկու ձեռ-ում է : Արմ . բառ . , Խոքն զարուած է նաեւ Խաւքն, Խքն՝ որոնք հնագոյն ձեւերն են» . այբբենական կարգը խախտելով նախ պիտի նշուէր Խաւքն, իսկ Խաւքն-ը հնագոյն է լոկ Խոքն-ի համեմատուելու, ոչ Խքն-ի : Մէյէն Ուրուագիծ-ի էջ 38-ում ունի միայն Խաւքն, էջ 49՝ «Եւ-ը վերջի վերջոյ բարբառային ձեւով արտասանուել է io (Խոքն՝ Խքն-ից) : — Մթին իմաստը պէտք էր պարզել յունարէն բնագրով եւ հայ . ձեռագրերի տուեալներով :

97. 72-73 «Յայնմ ձայնէ, որ միշտ անկանի ի լսելիս նոցա, գայն իրիք ինչ բարբառ ոչ կարեն լսել» . իմաստը պարզ չէ . գուցէ էր «գայ[լոյ] իրիք ինչ բարբառ» «ուրիշ բանի ձայն» :

98. 74. 17-18 «Մի՛ արկցեն մեզ աշխատութիւն իմաստունքն յունաց մեկնել գայնս, որ Աստուծոյ միայն են երկինք» . ո՞րն է յարաբերական դերանունան շարահիւսական պաշտօնը . գուցէ միջնադարեան է, փիւ [քե] կամ [զի] «թէ» :

99. 75. 12 «Օրհնեցէ՛ք Աստուած ի հաստատութիւն զարուսեան նորա» . օ-ն փիւ աւ-ի պէտք է վրիպակ համարել : էջատակում ասուած է «Հմմտ . Մաղմ . , ձՄ , 1, ԺԷ , 3» : ԺԷ 3-ում բնագրի տողին նմանուող բան չգտանք : իսկ ձՄ 1-ում՝ ի հաստատութեան է, եւ ոչ թէ ի հաստատութիւն, որ ուղեւորման պարագայ կը լինէր : Ճիշտ ձեւը էջատակի մէկ ձեռ-ում է :

100. 76. 2-5 «Ի սաստիկութենէ հողմոց, որ բախին ընդ միմեանս ամպս ի սաստիկ բռնաւոր հողմոցն, յորժամ հարկանիցին յեթեր, զգոգս ամպոցն ճայթէ, հատանի ճայթիւն որոտմանց» . հողմոցն բազմապիստեան յղում է Ամոպս Դ 13, սակայն այստեղ կարողում ուի սաստիկութիւն յղում է համար հարկանիստեան եւ հաստատում ենք «Ձի ահաւաստիկ ես եմ, որ հաստատեմ գերկինս եւ հաստատեմ զհողմս» . արժէ՞ր միայն հողմս բառի համար յղում կատարել : — «Պատկեր» ի սաստիկութեան յղում է Գ ճառի ծան . 12՝ «Հմմտ . «Պատկեր» ի սաստիկութեան յղում է Գ ճառի ծան . 12՝ «Հմմտ . «Պատկեր» 1893, N° 541, նորայր Բիւզանդացի, Գննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազգայնագիտի եւ Ղազարայ Փարպեցոյ, էջ 167 (տե՛ս «Յուշարձան . . .») : Պէտք էր ընթերցողին ասել, թէ ի՞նչ կայ

այդ երկու աղբիւրում, քանի որ ամէն մարդ չունի դրանք: Մենք ունենք երկրորդը. նշուած էջում դատանք, որ ըստ Նորայրի (որի անունն մէջ պակասում է Ն.), մի ձեռ. ունի ի սասուկութեմ, փխ տպ. ի հաստատութեմ: Միւս կողմից՝ Նորայրը պահպանել է տպ-ի յամպս, որ հրատարակչի սրբադրութիւնն է: Արդարեւ, քննական բնադրի ամպս մեզ համար ստոյգ եւ յստակ շարահիւսական պաշտօն չունի, թէեւ ծան. 13-ում ասուել է՝ «Ինչպէս երեւում է բնադրից, միմեանց բախում են ամպերը եւ ոչ թէ հողմերը՝ ամպերին»: Այս իմաստն ստանալու համար անհրաժեշտ էր ամպ[ք] ուղղականը փխ ամպս յողն. հայցականի: Առաջարկում ենք ամպ[ք] ուղղականը փխ մոց, որ [ք] բախ[ք]ն ամպս, ի սաստիկ բոն[ութեմ] հողմոցն, յոր-ժամ հարկանիցին յեթեր[ս], [ի] դոզս ամպոցն ճայթէ հատանի ճայթիւն որոտմանց»:

101. 78.4-5 «Որ մեծաւ զաւրոսթեամբ բարձր ի ձայն աղաղա-կէ» . բարձր-ը գաւրութեամբ-ի<sup>օ</sup>, թէ ձայն-ի որոշիչն է: Բարձր ի ձայն-ին նախընտրում ենք՝ 1 ձեռ-ի բարձրաձայն բարբառով-ը, որ կայ նաեւ Յուդ ԺԳ 17-ում, 1 ձեռ-ի բարձրաձայն-ը, 1 ձեռ-ի բարձր ձայնիւ բարբառոյն, մանաւանդ էջատակում չեղած ի ձայն բարձր-ը. հմմտ. «Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել» (Ա. Մակ Բ 27), «Ի ձայն բարձր միաբարբառ աղաղակէին», (անդ, Գ 50) եւ այլն:

102. 79.1 «Ի սահմանս յայլոց բնութեանց ջանային հասանել» . յ- նախդիրն աւելորդ է, եթէ այլոց բնութեանց-ը սեռական յատկա-ցուցիչ է, որպէս թուում է:

103. 79.1-2 «Անդունդ քի խորոց կոչէին բազում ջուրքն» . մեզ համար անհասկանալի է, ի տարբերութիւն տպ-ի, «անտուտ քի խո-րոց կոչէին բազում ջուրքն» նախադասութեան, որ իմաստ ունի, կոչէին-ը կրաւորական է: Ջեռ-եր ունեն անդուտ եւ անտուտ, որոնցից մէկը պէտք էր ընտրել, փխ անդունդ, որ ընթերցողին բան շատը ծան. ունի վերջում (ծան. 16):

104. 79.11-12 «Որ [...] հնարազէտ տեղեակութեամբ մարքի-ցին հայիլ ընդ իրան» . մարքիցին-ը սխալ է փխ մարքիցին, քանի որ բայը մարքեմ է, եւ այստեղ ներդրածական սեռի իմաստ ունի: — Հայիլ-ի փոխարէն դասականն է հայել:

105. 79.15 «Ի մեր բանքս չիք ինչ մտացածին ստալաղ» . ճիշտն է բանս, որ 1 ձեռ-ում է: Հրատարակիչը մեզ զտրմացնում է դա-սական դրաբարի իր աղաղակող անտեղեակութեամբ: Գուցէ բանքս վրիպակ է:

106. 83.7 «Եւ Աստուած յըշտմարանս երկրի» . ճիշտն է ի շտ-մարանս, թէեւ էջատակում չկայ, քանի որ գոյականը շտմարան է, բաղաձայնով սկսուող: Նոյնպէս 100.7 յըշտմարանս:

107. 83.9 «Զի գետ մի, որ անուանեալ կոչի. Հինդոս, յարեւելից, ասեն, ելանէ»․ զի—ն պարբերութեան առաջին քառն է, եւ նախադասութիւնը պատճառի պարտազայ չէ․ ի՞նչ է նշանակում զի—ն, որ գուցէ [որպէս] զի էր «ինչպէս որ»:

108. 83.17 «Գետք ելանեն ի կողմանս հրախոյս եւ գան...» ճիշտը երկու ձեռնում է՝ ի կողմանցն, քանի որ ելանել—ը բացառական է պահանջում, ինչ. տ. 9-10 «յարեւելից, ասեն, ելանէ», տ. 12 «ի միջոյ յարեւելից Երանեն» եւ այլն. ելանել—ը «բխել» չի նշանակում ներդրական հոլովով:

109. 84.11 «Քազումք գետք խառնկին»․ ճիշտն է քազում, թէ եւ էջատակում չկայ, բայց տպագրում է, եւ տ. 12 «քազում գետք ելանեն», տ. 14 «քազում գետք են» եւ այլն: Աւետարաններում նախադաս քազում որոշիչը յոգնակի ուղղական որոշեալին չի համաձայնել:

110. 84.13-14 «Ընդ Գուգանաց աշխարհն անցանեն, եւ գամ աստ ի մերում ծովուս մտանեն»․ պէտք է ուղղել յուն. բնագրի համաձայն մեր ընդգծածը, քանի որ գամ եւ մտանեն քայքայը չեն կարող ներդրական խնդիր առնել: Հնարաւոր է՝ «... անցանեն [ ] գան ներդրական խնդիր առնել: Հնարաւոր է՝ «... անցանեն [ ] գան աստ՝ ի մերում [աշխարհի] [եւ] [ի մերումս], ի ծով [ ]ս մտանեն», կամ «ի մեր ծով [ ]ս մտանեն»․ եւ այլն:

111. 85.10-11 «Աւն անդր թողոցուք գանհամ իմաստութիւն յունաց ստայաւդան»․ ընդգծուածը եթէ յունացի որոշիչն է, ապա՝ ստայաւդացն, որ 1 ձեռնում կայ. եթէ իմաստութիւն—ի որոշիչն է, ապա՝ [գ]ստայաւդ[ ]ն. 93. 13-16 «մտացածին ստայաւդ բանիցն յունաց: Քանզի հաւանութիւնք ստայաւդացն... ունին... ստարան բանից ստայաւդացն»: Ուստի՝ «յունաց ստայաւդացն» հաւանաբար:

112. 86.2-3 «Այսպիսի կարծր եւ ծանր վաստութիւնք գերկիրս հաստատութենէ յայտ առնեն»․ մէկ ձեռ. ունի խստութիւն գերկիրս, որի գերկիրս սեռականն է անհրաժեշտ գերկիրս հայցականի փոխարէն:

113. 86.6-10 «Ըստ համեմատի թեթեւութեան վերին վայրացն բարիոք էառ զթեթեւ տարրն ի պատշաճս պիտոյից, եւ վայրքն, որ զատեալ եւ մեկնեալ են ի նմա, նուրբ եւ պարզ, աւ յստակ են եւ զխոնավութիւնն ծծէ, եւ ի տեղի թեթեւութեան իւրոյ ի վեր հային գնացք իւր, որ եղաւ լինել»․ անկեղծօրէն ասած՝ զրեթէ քան չենք հասկանում:

114. 86.19-20 «Եւ արարին զերկտսին յիւրում տեղով»․ չորս ձեռ. ունեն ճիշտ յիւրաքանչիւր բառը փխ յիւրում, որ յարմար չէ գերկոսիւն—ի հետ:

115. 87.17 «Զոր ծծէ այսչափ խոնաւութեանց ջուրց» . տպւն ունի որ, սակայն, այնուհանդերձ, նախադասութեան շարահիւսութիւնն ու իմաստը մեզ համար պարզ չեն, ինչպէս շատ այլ տեղերում :

116. 88.7 կռուիցեմ . քառարանները կռուեմ—ը յղում են կրուիւմ—ին, որ սովորական խոնարհումն է, եւ այստեղ մէկ ձեռ. ունի կռուիւմ, որ ճիշտն է :

117. 89.10-11 «Զի եթէ յորժամ փայտ գիայտ շփի, հուր ծնանի» . տպ՝ է փխ եթէ, որ նշուած չէ էջատակում . ուրիշ տեղերից էլ է պարզում, որ քննական փնտրի հեղինակը լրիւ չի ներկայացրել տպ—ի այլընթերցումները : Անկարելի է գիայտ հայցականը շփի կրաւորականի հետ : Կա՛մ գիայտի (տրական, ինչպէս «Ջարկան զգետնի» յայտնի նախադասութիւնը Աւետարանում), կա՛մ ընդ փայտի, ըստ Նձի—ի շփեմ քառայողուածի՝ «Յորժամ փայտ ընդ փայտի չփի, հուր ծնանի» (Վեցօր. սշ.) :

118. 89. 16-17 «Ջամենայն ինչ, որ բարուք կազմեցան» . էջատակում չկայ, բայց ճիշտն է կազմեցաւ :

119. 89.18 «Փոխէ գնացս արեգական» . ճիշտն է [գ]գնացս, որ էջատակում չկայ : 90.4 «զգնացս իւր» :

120. 90.13-14 «զբաղցունեն... զքամճուսնս եւ զծանուենն» . նախընտրելի է 4 ձեռ—ի զքամճուսնս :

121. 90.15 «Ջպղտորեալն անդրէմ թողու» . ճիշտն է անդէմ, որ ձեռագրերում է, քանի որ թողու—ն ուղեւորման հայցական չի պահանջում, եւ ոչ էլ այստեղ անդրէմ—ը «նորից, դարձեալ» է նշանակում : Նոյն սխալը կայ տողի շարունակութեան մէջ՝ «Եւ որ անդրէմ մեկնեալ մնան՝ են աղիքն» . ի դէպ, (՝)—ի փխ (,) է պէտք :

122. 90.17-18 «Ջայս ասացին ի ծովէ» . ճիշտն է երեք ձեռ—ի զծովէ—ն՝ «ծովի մասին» : Ասացական բայերը, ինչպէս շատ յայտնի է, գ— նախդրով քաջատական անուղղակի խնդիր են առնում :

123. 94.1-3 «Իբրեւ նոքա մարտ եղեալ ընդ միմեանս կռուիցին, մեք վիմչ լուռ եւ խաղաղ մտիցի՞մք, լի՞ցուք տեսողք մարտին» . (°)—ներն աւելորդ են, քանի որ 93.18 «Եւ մեզ անկանել յաշխատութիւն... իբրեւ գործ իմն աւելի համարիմ» : — Միմչ—ի փխ յարմար է ձեռագրերի իմչ—ը :

124. 94.12 «Այլով բանիւք» . ճիշտն է 5 ձեռ—ի այլովք—ը :

125. 94.17-95.12 «Ասացուք դարձեալ մւ ընդդէմ ուրումն, որ յեկեղեցւոյ է եւ դանդաչէ [...] ասէ [95. 1, 3, 4, 8] : Եւ վասն այնորիկ, ասեմ, կոչեցաւ ծով» . ըստ նախորդ եզակիների՝ ասեմ—ը պիտի լինի ասէմ կամ ասէ, որ էջատակում չկայ :

126. 95-96 «Ասացաւ զվերնոյն, թէ փառաւորիչք են [...] դէ-  
ցուք զնոսա զիսաւսնոց բնութեան»։ Ճիշտն է երեք ձեռք-ի զվերնոցն  
յողնակին (1 ձեռ. էլ ունի վերնոցն), ինչպէս վկայում են «փա-  
ռաւորիչք են» եւ գնասա :

127. 97. 2-3 «Ձուրքն, զոր անուանեաց խոտորեալս բանդագու-  
շեալք, փառաւորիչք են Աստուծոյ»։ Բանդագուշեալք յոգնակին, որի  
ծան-ը յղում է ՀԱ, 1976, 11-12, էջ 500, որ այժմ ձեռքում չունենք,  
ոչ մի կերպ ընդունելի չէ քերականութեան կողմից : Տպ-ն ունի բան-  
դագուշեալ, որ վատ չէ : Սակայն նախընտրում ենք երկու ձեռագրի  
բանդագուշեալն ենթական. ըստ մեզ՝ դա նա է, որի մասին 94. 17-ում  
ասուած է «Ասացուք դարձեալ եւ ընդդէմ ուրումն, որ յեկեղեցւոյ  
է եւ դանդաշէ աննման առակաւք ասել զլուրցն վերնոցն բանս ան-  
նման» եւ այլն :

128. 97. 10-11 «Իմաստութեամբ արարչութեանն նորա երևիմ  
կատարեալ գեղ վայելչութեան նոցա»։ Ճիշտն է, ըստ ձեռագրերի,  
կա՛մ երեւի գեղ, կա՛մ երևիմ գեղեցկութիւնք : Անկարելի է հաշտե-  
ցնել երևիմ յողնակին եւ գեղ եզակի ենթական :

129. 98. 5-6 «Իսկ ճարտարն եւ մինչչեւ սկսեալ էր գգործն նկա-  
րեալ ունէր ի միտսն կատարեալ գգործ պատկերին»։ տալ-ը չունի  
կատարեալ, որ կա՛մ շարահիւսօրէն չի մտնում նախադասութեան  
մէջ, կա՛մ էլ օթէ գգործ-ի որոշիչն է, առած պիտի լինէր ետագաս  
որոշեալի՝ գգործ, նախդիրը՝ [զ]կատարեալ գործ :

130. 98. 13-14 «Փոյթ անձին ունին լսել», 98. 21 «Ընդ նմին  
փոյթ անձին կայցուք ունել ի մտի գ՛ոգա»։ Ճիշտն է ձեռագրերի  
յանձինք, ինչպէս «փոյթ յանձին կալան» (114. 9), քանի որ յարա-  
յանձինք, ինչպէս «փոյթ յանձին ունիմ (կալայ), ինչպէս ն՛ՀԲ-ում է (փոյթ  
դիր քայն է փոյթ յանձին ունիմ (կալայ), ինչպէս ն՛ՀԲ-ում է (փոյթ  
բառաթողուած), ինչպէս դասական քննադրերում է. օրինակ՝ «Դուք  
փոյթ յանձին կալայք» (Ա Եղբ Բ 28), «Ջամենայն փոյթ յանձին  
կալեալ գրել ձեղ» (Յուշա 3), «Փոյթ յանձին ունելիք» (Բ Գետ Գ  
14) եւ այլն :

131. 98. 19-20 «Քանզի դբարեալ է յաշխարհս ի պէտս կարաւ-  
տութեան, տացուք զմիջոց աւուրս հոգւոցն նորա»։ Ճիշտն է մէկ  
ձեռք-ի աշխարհս ուղղականը որպէս ենթակայ, քանի յաշխարհս հայ-  
ցականը անբարիք է : Դժուար թէ յաշխարհս նշ. «Երկրներում» : Յաշ-  
խարհիս ներդրականի համար ուրիշ ենթակայ էր պէտք :

ՀԱՌԻ Դ

132. 103. 15 «Եւ ասաց, ասէ Աստուած՝ Ժողովեսցին ջուրքն...»։  
Համոզուեցինք, որ հրատարակիչը լրիւ չի տիրապետում կէտադրու-  
թեան երեւանեան կանոններին, որ նա պիտի կիրառէր : Իսկ այստեղ

սխալ կէտադրութիւնը խանգարում է իմաստին. պիտի լինէր՝ «Եւ ասաց, ասէ, Աստուած, "Ժողովեսցին..."», ինչպէս է 125.1-ում: Էջատակում նշուած է Ծն Ա 1, 9, 10: Արդ, 9-ում կարդում ենք. «Եւ ասաց Աստուած, Ժողովեսցին...», որով պարզւում է, որ ասէ-ն է պատմող Բարսեղ Կեսարացունը, եւ ոչ թէ ասաց-ը: Հմմտ. «Եւ ետես, ասէ, Աստուած, զի բարի է» (97.7):

133. 104. 7-8 «Բազմութիւնք ջուրցն ծածկեալ ունէր զերեսս նորա»․ ճիշտն է երեք ձեռ-ի բազմութիւն եղակին ունէր եղակի բայի հետ:

134. 104. 17-18 «Իսկ յորժամ դոցեն (ջուրքն) տեղի զառ ի թափ, իսկ եւ իսկ իբր սկսանին շարժիլ զնացք նորա՝ յորդեն ստիպեն յորդութիւնք քաղմութեանց նոցա»․ նորա եղակիլի փխ, որ անյարիր է չկրկնուած ջուրքն ենթակայի հետ, ճիշտ է չորս ձեռ-ի նոցա-ն, որ քնարբի նախադասութեան վերջում էլ կայ:

135. 105. 4-5 «Ամենեքին զմիմեանս ստիպեն երազնքացք զնացիւք»․ ըստ մեզ՝ երազնքաց, որ մէկ ձեռ-ում է. չենք կարծում, թէ երազնքացք-ը վերաբերի ամենեքին անթակային:

136. 105. 9-10 «Պատրաստական կային վասն խոնարհազնաց բընութեան նոցա երթեալ հասանել ինքեանք ինքեամբք ի հարթ եւ ի միատարր տեղի»․ ըստ մեզ՝ երթալ, ինչպէս 6 ձեռ-ում: Տ. 13 «քանզի ոչ ունէին հրաման խաղալ հլանել ի կայանից անտի», սերկու անորոշ դերբայ. «Առին հրաման ժողովել հասանել» (105.15), «հասանել բանակել» (108.8):

137. 105. 11-12 «Այլ ահա գոյր նոցա հարթ եւ միատարր տեղի, եւ յառաջ, քան զհրաման»․ (,)–ներն աւելորդ են, քայց դըլ-խաւորը մէկ ձեռի զհրամանն է, քանի որ տ. 8-ում կայ «լինէր ի վերայ նոցա հրաման»․ նոյն հրամանն է: Տ. 13 «ոչ ունէին հրաման»–ի անորոշ հայցականը չչիտթել մեր առաջարկած զհրամանն որոշեալ հայցականի հետ. սա յարադիր բայ է, ուր սովորական է անորոշ հայցականը: Տ. 15 «առին հրաման»․ յարադիր բայ: 105.18 «հրամանաւ Աստուծոյ առին ջուրքն պղնացս իւրեանց»․ մէկ ձեռ. ունի հրամանաւ, որ նախընտրելի է նոյն պատճառով: — 106.4-5 «Մինչ-չեւ առեալ էր յԱստուծոյ հրամանն...»․ ճիշտն է մէկ ձեռ-ի զհրամանն, գ- նախդրով, քանի որ յօշ ստացած անորոշ կամ առանց գ- նախդրի հայցական անկարելի է դասական գրաբարում: կամ էլ առիմ հրաման, որպէս յարադիր բայ, որ էջատակում չկայ:

138. 106. 2 «Ինքեանք յամանէ Ելանիցեն միանդամայն խաղալ»․ բացառականը նշ. «անձամբ, իրենք իրենցից»․ քաղմութիւ ձեռագրեր ունեն յամանց, որ անտեսուել է, քայց տ. 5 «ոչ շարժեցան ինքեանք յամանց ցուցանել պղնացս իւրեանց»: Նախընտրում ենք յամանց-ը,

յողնակի ենթակայի կամ ստորոգեակի հետ որպէս մակրայարար գործածուած :

139. 106. 13-16 «Յ սկզբանէ կարգին գամ առ միմեանս գյաւեւումն եւ զհասարակելն, զքերամալն եւ կացուցանել զկարգ ժամանակացն՝ բաժանմամբ անվրէպ եւ անդադար զնացիւք»։ Կենթական տ. 8 բնութեանց հասկացութիւնն է՝ բնութիւնիք : Մեղ միանգամայն անհասկանալի են կարգին գամ բայերը, ըստ որում առաջինը կրաւորական (եթէ կարգ-ի սեռ. տր. -ը չէ), միւսը՝ չէզոք, եւ յաջորդ որոշեալ երեք հայցականները, որոնք կարող են միայն ուղիղ խընդէր լինել : 5 ձեռ. ունեն կարգէն, որ գուցէ նախապէս կարգեն էր, ներդործական սեռի, որով կ'արգարանային հայցական ուղիղ խընդէրները :

140. 107. 7-8 «Կյան արդելեալ ի պաշարանի»։ ուղղականը հաւանաբար պիտի լինի պաշարան, որ չկայ բառարաններում. Թոռն. Բ, էջ 23, ի պաշարման, որ բացատրել է «պաշարման մէջը», յիշեցնելով, որ մէկ ձեռ. ունի ի պաշարմանի : Ի պաշարմանը ճիշտ կարող է լինել. տ. 6-7-ում կարգում ենք ըստ աւրինակի ուփոյց («խոռոչ, փոս» եւ այլն. ՄՄ) պաշարելոց :

141. 107. 19 «որք այսր ի վեր երեւին»։ տ. 17 «աստ ի վեր զտանել», որի աստ-ը ներդոյականի նշանակութեամբ ճիշտ է, իսկ այսր-ը կամ ուղեւորման հայցականի իմաստ արտայայտող երեւիմ բայի հետ անընդունելի է. այլընթերցում չկայ : Հմմտ. Եղնիկ, 1959, 94. 29 (Վենետիկ, 1826, 214) «Անդ որ ի վեր յերկինս խաւարն լինի, ուստի՞ իցէ», որի անդ ի վեր-ը ճիշտ է :

142. 108. 10-12 «Կալան իւրաքանչիւր կայեանս, որ զատեալ մեկնեցաւ [ ... ] զեռեղեցան յիւր կայանի»։ պիտի ուղէինք իմանալ, թէ ի՞նչ հիման վրայ մերթ կայան եւ մերթ էլ կայեանի բառն է ընտրուում, երբ ձեռագրերն օջատակում ունեն թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը, ինչպէս այստեղ երեք ձեռ. ունեն կայանս փո կայեանս : — Յիւր-ի փո նախընտրում ենք 5 ձեռ-ի յիւրաբանչիւր. տ. 17 «զիւրաբանչիւր տեղիսն» :

143. 112. 7-8 «Իբր թէ տիրկս արկեալ զմիմեանց, ունիցին պինդ զմիմեանս»։ ճիշտն է սրկու ձեռ-ի զմիմեանբ-ը, քանի որ գ- նախդրով գործիական վնդիր է առնում արկանի բայը. «Արկան զիւրեանբ զամբարչտութիւն» (Սաղ շէ 6), «Արկին գնալաւ զլամիդ կարմիր» (Մատ թի 28) եւ այլն : 120. 7-8 «Գիրկս արկեալ պատեալ կայցէ գցամաբան» :

144. 118. 1-2 «Ինչ որ կազմեալ կայցեմ ի բնութեանցն եւ անկանիցիմ ընդ սողմամբ»։ ինչ որ ենթական եւ կայցեմ ու անկանիցիմ, մէկը՝ ենթական, եզակի, միւսը՝ ստորոգեալը, յողնակի, չեն հա-

մապատասխանում դասական գրաբարի շարահիւստութեան: Ինչ-ը կարող է եղած լինել ի[rp]:

145. 118. 7-8 «Իւրաքանչիւր ոք ի նոցանէն ընդ գաւրուքիւն իւրոյ ընկերին հաղորդեալ են» . իւրաքանչիւր ոք ենթական պահանջում է է, որ ութ ձեռագրում է: — «Հետ» իմաստով ընդ նախընթաց եզակիում պահանջում է տրական՝ գաւրուքեան, որ էջատակում չկայ . տ. 13-14 «Միաբանի դարձեալ եւ ջուրն ընդ աւոյոյ» . տ. 16-17 «Մերձաւոր է ջուր ցրտութեամբ ընդ երկրի եւ խոնաւութեամբ ընդ աւոյոյ» . 119. 1-2 «Կապեալ կայ ընդ աւոյոյ [ . . . ] եւ հաղորդեալ ընդ երկրի»:

146. 119. 16-17 «Աստուած ոչ փթէ աչաց տեսլեամբ հայի ընդ դեղեցկութիւն արարածոցն իւրեանց, այլ . . . » . Աստուած եզակի ենթական ղէպքում ճիշտն է իւրոց (փխ իւրեանց), որ 5 ձեռ-ում է:

147. 119. 18-19 «Որոց յուրախարար հանգիստն իւրեանց ծածկեալ կայ գեղ վայելչութեան իւրեանց» . ծածկեալ կայ-ն պահանջում է ներդոյական տեղի պարագայ՝ հանգստեան, որ մէկ ձեռ-ում է, կամ յոգնակի ներդոյական՝ հանգիստն, որ մէկ ձեռ-ում է . 120. 12 «Որ ծածկեալ կայ յիմիքն»:

148. 120. 3 Նարաւոց . գրաբարի բառարաններում յոգն . սեռ .-տր .-ը նարաւոց . (կամ նարաւոց) է, ինչ . տպ-ում եւ թոռնեան, Բ, էջ 26-ում է սրբագրուել:

149. 122. 12 «Ցուցից գաւրիմակ մի» . թոռնեան, Բ, էջ 28, աւրիմակ մի, որ կանոնաւորն է որպէս անորոշ հայցական մի անորոշ ածականի հետ: Այս անկանոնութիւնը հաս ու կենտ երեւում է այլուր, ինչպէս Եղնիկ, 1959, 128. 24 «ասպականեալ գկոյս մի» (Վենետիկի տպ . էջ 296):

150. 122-123 «Ունիմ աւրիմակ ի նաւավարաց, որ թէ պակասիցէ ջուր ի ծովու, առնուն զջուրս ծովուն գաղիմ եւ գրառն» . որ-ից յետոյ (, ) է պէտք: Թայց այստեղ թոռնեան, Բ, էջ 28 տպ-ի որ-ի փխ ունի որոց, որ 7 ձեռ-ում էլ կայ եւ կանոնաւոր է որպէս պակասիցէ-ի խնդիրը: — Անկանոն են փրար զջուրս յոգնակիին եւ գաղիմ ու գրառն եզակիները . բացի այդ, նոյնիսկ եթէ գաղիմ եզակիին կանոնաւոր լինի, գրառն բառը եւս պէտք է յօդ ունենայ, ինչպէս գաղիմ: Կանոնաւոր է՝ կա՛մ զջուրս եւ գաղի[ս] ու գրառ[իմն], կա՛մ զջուր[ն] (կամ զջուր) ու գաղիմ եւ գրառն[ն]: Այս առաջարկները չկան էջատակում:

151. 123. 3 «Դնեն սպունդս մեծամեծս խուփս կաթսայիցն» . թոռնեան, Բ, էջ 28, ունի ի խուփն տպ-ի լոկ խուփն-ի փխ . բայց քանի որ կաթսայիցն յոգնակի է, եւ ամէն մի կաթսայ իր խուփն ունի, ուստի՝ [ի] խուփս ներդոյականը: Բնագրի սպունգս եւ խուփս կա-

որոշ են լինել կրկնակի ուղիղ խնդիրներ՝ «սպունդներ դնում են որպես խոսիեր»․ քայքայ կրկնակի խնդրի զէպլում պիտի լինէր [q]սպունգս․ մէկը լինում է որոշեալ, միւսը անորոշ հարցական: Ողջմտութիւնը թելադրում է, որ սպունդները ջէին կարող փոխարինել խոսիերին, այլ դրւում էին խոսիերի հետ:

152. 123. 17-18 «Գտանեն ի պատմաւն նորա զպէտս կարաւորութեան կենաց իւրեանց»․ Թոռնեան, Բ, 29, ի պատմաւն, երեք ձևով ի պատմաւն: ՆՀԲ (Պատմաւ) ի պատմաւն, որի վկայութիւնները դասական են, կամ ի պատմաւ (Նարեկացոց) նշ. է «յաղագս, վասն»: Տ. 12-13 «Բարի եւ գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատմաւ քարի», որը նոյնպէս անթաղրել է տալիս ի պատմաւ անեղականը կամ յողնակին:

153. 124. 12-13 «Ի նոյն հոգալ եւ ի նովին թեւակոսել»․ նովին գործիականը երբեք չի կարող ի նախդրի հետ գործածուել: Տպւր եւ ձևադրեր ունեն ի նոյն, քայքայ հաւանաբար ճիշտն է նովինը քեւակոսել «փորձել»-ի հետ:

ՃԱՌ Ե

154. 126. 10 գարգալկնէ․ քանի որ եզ. տեռ.—տր.—ը արեգական է, ապա կանոնաւոր եւ դասական եզ. բացարականը պիտի լինի եւ է արեգականէ: Արեգակնէ-ն, -ա-—ի աղմամբ, միջնադարեան է, երբ դասական բաղանիքը դարձել էր բաղնիք:

155. 127. 16-128 «Եթէ իցէ ինչ ի խոտոցն եւ յարմատոց, որ յայլ իրիք ի պէտս իցէ, սակայն այլովք իրաւք ք մեր շահ, եւ ի լրումն պիտոյիցն մերոց, թէ եւ կերակուր իցէ, սակայն այլովք իւրիք եւ իցէ, մեղ աւազակաբ է ամենայն ինչ»․ եթէ այլը իրիք-ի որո-ւելն է, ապա պիտի լինէր այլ[ոյ]: — Այլովք իւրիք-ի փխ ըստ մեզ պիտի ընտրուէր ձեռադրերի այլովք իրաւք-ը, ինչպէս նախադասութեան նախորդ մասում: Այլովք յողնակին չի կարող իւրիք եզակիի որոշելը լինել: Իսկ իւրիք-ը չի կարող լինել յողնակի որոշեալի որոշելը, եթէ այլովք իւրիք-ի մէջ իւրիք-ն է որոշելը:

156. 128. 11-13 «Բազում եւս սե ալլ ազգ են խոտոցն, որ ոչ ունին ի ծայրս հասկացն իւրեանց սերմանիս»․ ազգ-ն այստեղ նշ. «տեսակ», ուստի հաւաքական անուն չէ, որպիսին է ազգ «ցեղ» գո-յականը․ ուստի քն յողնակի քայքայ ենթական պիտի լինի ազգ[ի], որ էջատակում չկայ: Նոյն սխալը՝ 149. 9: — Հասկացն բառի փխ նախընտրելի է ձեռադրերի հասկացն, քանի որ քոյր քոյսերը հասկեր չունեն. տ. 5-6 «Եղեղան սերմն ոչ գոյ, եւ ոչ սիղոյ, սե ոչ քրքմի, եւ ոչ պրտուի», որոնք հասկեր չեն ունենում. 139. 8 «կատարեալ ամամբ հասկացն սերմանցն»:

157. 130. 10 «Նալեացուք ալուսեալս եւ ընդ մարդ ի ժամանակ ողջութեան»։ ճիշտն է ձեռագրերի ի ժամանակի ներդրականը։

158. 130. 18 «Ծնկի Թիպի ի Հիւանդութեան ջերանի յախտի»։ (,) պէտք է ջերանի-ից առաջ, նախընտրելի վեր նաեւ ծիրի-ից առաջ։

159. 132. 2-3 «Քարողքն առաջի աղաղակեն, մի ի մի դրեղընդեալ բարբառն նուարեն»։ Ի՞նչ է նշ. մի ի մի. տպ-ի եւ Թոռնեանի, Բ, էջ 32-ի մի մի-ն նախընտրելի է։

160. 133. 1 «Բառնայ կեանք հպարտացելոյն»։ նախընտրելի է տպ-ի բառնայ յողմակին կեանք անեզական ենթակայի հետ։

161. 133. 5-6 «Նմանեցոյց մարտարէն Աստուծոյ զիսուս մարդկան ծաղկի խոտոյ, որ ընդ ծաղկին անդէն վաղվաղակի խամրին»։ նախընտրելի է երեք ձեռագրի խամրի-ն, մէկ ձեռ.՝ խամրի։ համրիմ-ի մէջ -ն կարող է միայն յօդ լինել, բայց ի՞նչ պատճառով։

162. 134. 8-9 «Ձի դրոյս ի վեր երեւեցուցէ, եւ զարմատն ի ներքս պնդեցէ, եւ ըստ Թուոյ արմատոցն...»։ Եւ՛-ից առաջ (,) պէտք չէ, քանի որ նոյն ենթական է։ Նախընտրելի է զարմատս յողմակին, ինչպէս վկայում են արմատոցն եւ տ. 12 արմատքն, թէեւ էջատակում չկայ։

163. 135. 8 «Ի երկիր անկեալ»։ ճիշտն է յերկիր, թէեւ էջատակում չկայ։ Թոռն. Բ, 36, ի յերկիր։

164. 138. 14 «Ի վնասակարացն անտի»։ կամ -ն յօդը, կամ յաճախ նրան փոխարինող անտի-ն աւելորդ է։

165. 139. 5-6 «Ո՛չ առ ժամայն վաղվաղակի իրբեւ եղեւ հրաման կազմեցան պտուղքն ընդ բոյսսն, այլ նախ բոյսքն արձակեցաւ»։ նախընտրելի է միասին գրուած առժամայն-ը, քանի որ ժամայն-ը ածանցաւոր է։ — Այստեղ էլ, ինչպէս շատ նախադասութիւնների մէջ, կէտադրութիւնը թերի է։ — Գլխաւորն է արձակեցաւ[ն], քանի որ բոյսքն պէտք է յողմակի մնայ, հակառակ որոշ ձեռագրերի բոյսքն եղակի։ Արձակեցաւ-ը պուցէ վրիպակ է։

166. 139. 9-11 «Ո՛րպէս ուսար ի հրամանէն Աստուծոյ՝ զնոյն կարգ ունի եւ կայ ի բնութեանն ամենայն իւրիք, որ հաստատեցաւ»։ Աստուծոյ՝-ի (՝)-ը պիտի լինէր (,)։ Դրանից յետոյ եկող բառերի մէջ դժուար թէ որ-ը լինի ունի եւ կայ ստորոգեալներէ ենթական. դուցէ իւրիք-ը պիտի լինէր [իւնչ], ենթակայ. իմաստը յատակացնելու է յուն. բնագրով։

167. 141. 4 «Ապա առնի զգործանն կատարեալ»։ զգործանն հայկականը անյարիբ է առնի կրաւորականի կամ կրաւորակերպ չէզոքի հետ. ճիշտն է առն[է] կամ [ը]գործանն. աղբուր է Մրկ Դ 28 «Երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն եւ ապա զհասկն եւ ապա զգոր-

եանն ատոք ի հասկին» նախադասութեան զցորեանն հայցականից :

167ա. 143. 3-5 «Այս ամենայն վախելիութիւնք կանգնեցան կացին միանդամայն՝ միտով ակնարկելով մեծազաւր զարուքեամբն» . ճիշտն է զարուքեանն, որ երկու ձեռ-ում է : Հմմտ. «ակնարկելով հրամանին յանկարծակի վաղվաղակի սկսանէր երկիր բշխել զբոսս» (141. 7-8).

168. 144. 4 «Որ ինչ պատուական էր ի բնութիւնն այն մեզ տուաւ» . ճիշտն է բաղմամբիւ ձեռագրերի ի բնութեանն(ն), եւ (, ) է պէտք այն-ից առաջ :

169. 147. 11-12 «Առ սէրն մարդկան հաղորդեսցուք ի բարեաւ գործովք» . ի նախդիրը չի կարող զործիական հոլովի հետ զործածուել . եթէ վրիպակ չէ, աւելորդ է : — Նախընտրելի է երկու ձեռ-ի եւ տպ-ի բարւք-ը :

170. 149. 10 «Կէսքն՝ պտղաբեր, եւ կէսքն՝ անպտուղ» . ճիշտն է ձեռագրերի պտղաբերք եւ անպտուղք յոգնակիները, ինչպէս տ. 11 գատնալիք եւ մեկնեալիք, տ. 14 բազմադիմիք եւ թիւրազգիք : Տ. 12-13 նաեւ «գունակք գունակք տերեւովք իւրաքանչիւր», սակայն մեզ թը-ւում է, ճիշտն է ձեռ-երի գունակ գունակ-ը որպէս տերեւովք-ի չհաս-մաձայնած նախադաս որոշիչը : «Գունակ գունակ ծաղկովք» (159. 14) :

171. 150. 15-16 «Մարու թէ մանկութիւն եւ ծերութիւն երեւի ի նոսա» . ճիշտն է երկու ձեռ-ի երեւին յոգնակին երկու ենթակայի հետ : Պատահում է «Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա» (ՅՀն Բ 2) տեսակի համաձայնութիւն, որի ստորոգեալի եւ շարկապուտած եզակի ու յոգնակի թուով ենթակաների շարադասութիւնը կարեւոր է : Այստեղ ունենք երկու եզակի նախադաս անթակայ :

172. 151. 11-12 «Յորժամ վարիցեն առ արմատովքն երիթ պարարտ ի պեւկէս փայտէ, եւ վարիցի ուռն եւ մտանիցէ ի սիրտ ծառոցն . . .» : Հրատարակութեան ենք պատրաստել Նորայր Ն. Բիւզանդացու նամակները Վիեննայի Մխիթարեաններին : 1888 թ. մայիսի 8-ին Ստոքհոլմից Հ. Գր. Գալէմբեարեանին շքած նամակում յայտնում է, որ Ազգաթանգեղոսի (քննական հրատ.) 67. 7 «վարել ուռումս ստուարս» արտայայտութեան ուռումս յոգնակի հայցականն ըստ նրան պիտի լինի ոռումս, նոյնը նաեւ, ըստ նրան, վեց-ի տպ-ի այս նախադասութեան մէջ, որը, նրա արտադրութեամբ, Անտոնեան Հայրերի ձեռագրում այսպէս է . «Յորժամ վարիցի առ արմատովքն ոռն (տպ. ուռն) պարարտ ի քեանկնոյ փայտէ, վարիցի ոռնն (տպ. ուռն), մտանիցէ ի սիրտ ծառոցն . . .» : Ուրիշ վկայութիւններ էլ բերելուց յետոյ նա գրել է . «Ահա այսպէս վեց անգամ ոռն գրեալ տեսնելով յերկու ընտիր շքազգիքս, հետեւեցուցի թէ ուրեմն եւ Ազգաթանգեղեայն ուռումս վարել պիտի ըլլայ ոռումս վարել ի հին եւ

յընտիր գրչագրի վանացդ»: Այս գրչագիրը Վիեննայի Մխիթարեան կրկնագիր Աղաթանգեղոսի հատուածներն են, ուր, իրօք, կարդում ենք ուռուն: Ուստի 1911 թ. մարտի 16-ին Նորայրը Հ. Ն. Ակինեանին գրել է. «Յերես 67 նորատիպ Աղաթանգեղին (քնն. հրատ. ՄՄ), տող 7, գարձեալ սխալ կը տրուի վարել ուռուն, առանց արթննալու 2 ձեռագրաց տողուն ընթերցուածէն: Արդ՝ 23 տարի առաջ հարցուցի ի Ստոքհոլմէ Մեծ. Հ. Գրիգորիսիդ. «Իցէ՞ արդեւք ի կրկնագրի Միարանութեանդ ուռուն». եւ արձնիւ Հայրն պատասխանեց 1888 Ապրիլ 17/29 թուականաւ, թէ Ձեռագիրդ ունի «կայիճս երկաթիս ի ծունգս նորա, վարել ուռուն ստուարս». շատ զարմացայ այս ձեր գիտին վրայ, որուն չգիտեմ ի՞նչպէս հասաք»: Այսպիսով կասկածից դուրս է, որ Վեց-ի ուռն քառը պիտի սրբազրուի ուռն: Գարձեալ Նորայրի նամակից Հ. Գր. Գալէմբեարեանին. «Թուի թէ վերջին դարուց գաղափարողք զի մի՛ գուցէ ուն չփոթուի ընդ ուսմարէն անպարկեշտ քառին ու կամ ուր, սկսած են տրուի գրել ուռն: Իսկ ուն, յգ. ուռունի, յայտնի է թէ կը նշանակէ գղ coin («սեպ». ՄՄ) եւ ուռուն վարել է գղ. enfoncer des coins («սեպեր խրել». ՄՄ): Զարմանալի է որ Նոր Հայկազեանն տեսնելով թէ ի յունարէն թարգմանութեան Աղաթանգեղի ուռն (ուռն) թարգմանեալ է սփի՛նս, գղ. coin, չէ կրցած իմանալ զստորջ նշանակութիւն քառիս»:

173. 152. 14 «Յարմաւենիս արուս եւ էգս ամուսնին, եւ որ էգ արմաւենին անուանի...». ամուսնին կրաւորականի հետ ճիշտը ձեռագրերի արուս եւ էգ ուղղականներն են, ինչպէս ուղղական է յաջորդ էգ արմաւենին հոլովածեւը ամուսնի կրաւորականի հետ:

174. 153. 8 «Գոյ թղենի, որ անուանեալ կոչի կատաղենիս». ուղիղն է ձեռագրերի կատաղենի եղակին, որ վերաբերում է նոյնպէս եղակի քզեմի ենթակային կամ որ-ին: Հմմտ. 154. 10 «Աւզտի թղենին քաղցուենի ի կատաղենի թղենևոյ անտի»:

175. 154. 12-13 «Աղբի աղբի փոփոխումնք գտանին առ այն, որ հաստատեցանն». յոգնակի երկրորդական նախադասութիւնը յուշում է այն, որ երկու ձեռ-ում է: Տ. 15 «Ո՞վ կարիցէ կալ ի վերայ չափոյ պտղոցն այնոցիկ, որ հաստատեցանն»:

176. 154-155 «Կէսք ի պտղոյն [...] եփին արեգակամբ, եւ կէսքն ի պտղոցն ժողովեալք...». պտղոցն յոգնակին թերազրում է պտղոյն-ի փիս պտղոցն, որ մէկ ձեռ-ում եւ սպ-ում է. կէսք(ն)-ը չի կարող եզակի խնդիր ունենալ:

177. 156. 4 «Որոյ ոչ իցէ բարի պատմառս արարածոյն իւրոյ». պատմառս բառի -ս-ն յօդ չէ, իսկ հայցականը անյարբիր է, փիս պատմառ[ն]:

178. 156.12-13 «Ածել զմտաւ գտեսչութիւն արարչին, որ սըփ-  
ուեալ եմ ի վերայ արարածոց». մեր ընդդժած ձգակին եւ յոգնակին  
անյարիր են միմեանց. երկու ձեռ. ունեն տեսչութիւնս յոգնակին,  
որ յարմար է: Այս գոյականը սովորաբար ձգակի է գործածուում,  
ուստի եթէ յոգնակին մերժուում է, եմ-ը պիտի լինի եզակի՝ [է],  
կամ որ[ոյ] սփռեալ [է], յարաբերեալ համարելով արարչին:

179. 157.15-16 «Որ ոչ գիտէ զգաւրութիւն այնմ հուզոյ, եթէ ի  
ծառոյ է». ճիշտն է երկու ձեռ-ի այնր սեռականը որպէս յատկա-  
ցուցիչ որոշիչ:

180. 158.1-4 «Ի մի եւ ի նոյն խոնաւութենէ որթ, զոր ընպէս,  
ի գինի դարձուցանէ, եւ ձիթենի՝ յիւղ եւ ի միւսում ծառն շրջի  
ջուրն ի քաղցրութիւն, եւ ի միւսումն ջուր գառնայ ի պարարտու-  
թիւն». ըստ ձեռագրերի տուեալների՝ սպասելի էր ի նմին խոնա-  
ւութենէ, առանց մի-ի, կամ՝ ի միոջէ եւ ի նմին խոնաւութենէ.  
յիւղ-ից յետոյ մե-ն աւելորդ է. ի միւսում ծառն անկանոնութեան  
փխ՝ ի միւսում, քանի որ երկու անգամ միւս չի գործածուում. ջուր-ի  
փխ՝ նոյն ջուր, քանի որ անկանոն է նախ ջուրն, ապա ջուր:

181. 158.11-12 «Յորժամ մատնեն ի տունկան եւ առնին ի նոցանէ  
գնաշակս քաղցրութեան». ճիշտն է հրեք ձեռ-ի եւ տպ-ի առնում  
ներգործականը, որի վնդիրն է գնաշակս: Կամ՝ գնաշակ[ֆ]. հմմտ.  
159.6 «Առնի ամենեւին անուշաբար քաղցրութիւն»:

182. 159.3 «Գայ հասանէ չափ, լինի ամենեւին քաղցրութիւն».   
ճիշտն է 6 ձեռ-ի ի չափ. ծանօթ արտայայտութիւն է հասանել ի չափ  
(հասակի): Տ. 6 «Իբրեւ հասանէ ի չափ խաղողոյն»:

183. 160.1 «Եւլաք արտաքոյ, քան զչարին». ճիշտն է 1 ձեռ-ի եւ  
տպ-ի արտաքոյ-ը, քանի որ ելանել-ը ուղեւորման հայցական է պա-  
հանջում, եւ արտաքոյ-ն է համապատասխանում զբան: Այլ գրուածք-  
ներում աւս յաճախ են շփոթուած արտաքոյ-ն, որ ներգոյականի ի-  
մաստ ունի, եւ արտաքոյ-ը:

184. 160.5-6 «Մակաւ քէ ինձ աւրս ողջոյն իւրով կատարեալ  
ժամուրք». ճիշտն է մէկ ձեռ-ի իւրով յոգնակին, ըստ ժամուրք յոգ-  
նակիի:

185. 161.1-6 «Կէսքն ի զարդուցն, որով աշխարհ զարդարեցաւ,  
ի մեր պէտս պատրաստեցաւ, կէսքն ի նոցանէ դարման անասնոց  
[...]: Եւ կէսքն յարմատոցն, որ հոյնի ի պէտս քժշկութեանց, եւ  
ի դարման ցաւոց մերոց պատրաստեցան». ըստ բազմաթիւ ձեռ-երի՝  
պատրաստեցան, փխ պատրաստեցաւ, ենթական կէսքն յոգնակին է,  
ինչպէս 2-րդ նախադասութեան վերջում: [ի] դարման, փխ դարման  
(մէկ ձեռ. ունի ի կերակուր), ինչպէս հրկրորդ նախադասութեան

մէջ: (,) ւ պէտք եղեմ-ից յետոյ. ի պէտս բժշկութեանց-ը պատրաստեցան-ի խնդիրն է, ըստ որում ջնջելու է եւ ի-ից առաջ (,) -ը: Որով-ը պիտի լինի որով[ֆ], ըստ յարաբերեալի: 2-րդ կէտքն-ը դրե-լու է (') -ով, քանի պատրաստեցան[ն]-ը չի կրկնուել:

186. 162. 1-2 «Յաճախեսցէ ի քեզ սէրն Աստուծոյ արարչին բուս». ճիշտն է 1 ձեռ-ի եւ տպ-ի քոյ սեռականը. բուս սրականը անյարիր է Աստուծոյ՝ արարչին սեռականի հետ, եթէ երբեք արարչին չի նշանակում «արարչի նկատմամբ»:

187. 162. 4 «Կողոպտին ի տերեւոց ի ժամ ձմեռայնոյ». ի ժամ-ն ինքնին սխալ է որպէս ներդոյական, փխ ի ժամու: Գլխաւորն այն է, որ այստեղ պէտք է ժամանակ քառը տարուայ եղանակի անուան հետ, եւ ձեռագրեր ունեն ի ժամանակս ճիշտ ձեւը: Հմտ. «ի ժամանակս զարնանւոյն հասեալք» (Աղ 332), «ի սարնանւոյն ժամանակս» (անդ, 340), «զամենայն ժամանակս ձմեռայնոյն» (անդ, 21):

188. 162. 5 «Եւ որք միշտ զտերեւան ունին, յանգգաս փոխեն դտերեւան». ընդդէմում բառը եթէ վրիպակ չունի, հասկանալի չէ. երեք ձեռ. ունեն յանգգայ, եւ տպ-ը՝ յայնգգայս, որ յարմարն է:

188ա. 162. 10-12 «Ծառ, որ կոչի միւրիկէ, որ ջրարբին եւ յոստին է, զի ընդ ջրարբին ջրարբի է, եւ ընդ յոստին յոստին համարի». ջրարբին քացայայտ վրիպակ է անշուշտ, որովհետեւ բառը ջրարբի է, ինչպէս նախադասութեան մէջ ունենք եւ բառարաններում: — Բառարաններում յոստին բառը յըլում է ոստին քառին, որ միակ ճիշտ ձեւն ւ՛ ըստ Հրաչեայ Աճառեանի «Հայերէն արմատակամ բառարան»-ի. արմատն է հնիս. ozd- «այրել, չորացնել»: Բարբառներ ունեն օստին, վոստին, վոստին: Ուստի ձեռագրերի յոստին-ը պիտի սրբագրուէր ոստին: Երկու ձեռ. ունեն յոստինսմ, -ն յօդով, ինչպէս յօդ ունի ջրարբինսմ. կա՛մ երկուսն էլ յօդով պիտի լինէին, կա՛մ առանց յօդի, քանի որ երեք ձեռ. եւ տպ-ն ունեն ջրարբիս: Նոյնը պիտի ասենք նաեւ ջրարբին-ի մասին, քանի որ յոստին-ը յօդ չունի, թէեւ չաղկապուած համադաս անդամներից շատ յաճախ միայն առաջինն ւ՛ յօդ ստացած լինում:

189. 162. 13 «Որ ունիցին զդործս իւրեանց զչարութիւն յերկուս կերպարանս». ճիշտն է կա՛մ երեք ձեռ-ի չարութեան սեռականը, կա՛մ երկուսի զչարութեան սեռականը, որի առաջ կրկնուել է զգործս յատկացեալի գ- նախդիրը: Սովորական է գործ չարութեան արտայայտութիւնը:

190. 163. 5 «Զոր եղաւ ի նմա». դարձեալ այստեղ էլ անյարիր են գոր ուղիղ խնդիրը եւ եղաւ կրաւորականը. այլընթեքցում չկայ:

191. 163. 6-8 «Եւ ի նոյն ի ծնունդ փոտոց յարմատոց եւ սերմանեաց եւ ծառոց եւ ամենայն սողաց անցանէ ի վերայ մեր ըստ

առաջին նմանութեանն» . մեր կարծիքով՝ աւելորդ են երկու ի նախ-  
 դիրները, եւ ենթական պիտի լինի ծնունդը: Խստոց բառից յետոյ  
 աւելորդ չէ երկու ձեռ-ի եւ-ը: Ֆացի այդ, յարմատոց բացառականը  
 պիտի լինի սեռական, ինչ. սերմանեաց, ծառոց եւ ազգաց:

192. 164. 2-3 «Զի տնկեալ լիցուք ի տան Տեառնն աւ ի դաւիթս  
 սուրբ Աստուծոյ մերոյ» . եթէ սուրբ-ը ի գաւիթս խնդրի ետադաս  
 որոշիչն է, ապա երկու ձեռ-ի սուրբս յողնակին է ճիշտ, կամ 1 ձեռ-ի  
 եւ տպ-ի սրբութեան սեռականը: Զենք կարծում, թէ սուրբ-ը Աս-  
 տուծոյ յատկացուցչի որոշիչն է. նոյնիսկ այս դէպքում կը լինէր  
 սրբոյ, որ էջատակում չկայ:

### ՃԱՌ Զ

193. 165. 7 «Կէտ եղեալ ժամանեցես ամենեքեան» . յողնակի  
 ենթակայով եղակի ստորոգեալը հաւանաբար վրիպակ է, մանաւանդ  
 դէմքերն էլ տարբեր են. յամենայն դէպս երկու ձեռ-երի ժամանե-  
 ցեմ-ը մնացել է էջատակում:

194. 166. 7-8 «Զիմ բանքս քննիցէք, թէ վրիպեցէ ելցէ աբ-  
 տաքս» . ձեռ-եր ունեն բանս, բանս, բանս . ճիշտն է բան-ս եղակին,  
 ըստ յաջորդ եղակի բայերի:

195. 166. 9-10 «Գուցէ անցից ինչ իւրք ի պատշաճից ճշմարտու-  
 թեանն եւ զանցանելն իմ վնաս [...] մի՛ լիցի» . եթէ ճիշտ ենք հաս-  
 կանում, էջատակում ձեռագրեր ունեն անցից զանցից կամ զանցից,  
 որ ճիշտ է, ինչպէս վկայում է զանցանելն բայը գ- նախաբայով:

196. 167. 13-15 «Լե՛ր [...] տեսող պէսպէս տեսչեանց երեւելի  
 արարածոցս, որ [...] հաստատեալ կայ» . էջատակում չկայ, բայց  
 ճիշտն է կամ յողնակին, նոյնիսկ եթէ արարածոցս անեզական է «ա-  
 րարչագործութեան» իմաստով:

197. 169. 8-9 «Տուիչ այնմ կենաց, որ հանդերձեալն է յաշխարհն  
 մշտնջենակաց» . այնմ-ի փխ 6 ձեռ. ունեն այնց սեռականը, որ ճիշտն  
 է կենաց անեզականի հետ. ըստ կենաց յարաբերեալի՝ որ-ն ունի  
 յողնակիի իմաստ, եւ 6 ձեռ. ունեն ճիշտ են յողնակին: Էջատակում  
 չկայ, բայց նախընտրելի է յաշխարհ[ի]ն ներդոյականը:

198. 169. 16 «Ժամանակեայքս այսպէս վայելուչ եւ դեղեցիկը  
 իցեն» . ոչ մի պատճառ չկայ՝ վայելուչ ստորոգելիական վերադիրը,  
 ի տարբերութիւն միւսի՝ գեղեցիկի, եղակի մնայ. մէկ ձեռ. ունի  
 վայելուչք ճիշտ յողնակին:

199. 169-170 «Զի թէ մեծութիւն չափոյն երկնից մեծասքանչ  
 դարմանալեաւք անցանն ըստ միտս մարդկան, որ կան մնան եւ ոչ  
 անցանն, ո՞րչափ եւս առաւել» . նախադասութիւնը սկսւում է Զի-ով

եւ վերջանում առաւել-ով. հասկանալի չեն վերջաւորութեան հարցումը եւ սկզբի Զի-ի պատճառը: — Ո՞ր բառն է անցանքն յոգնակիի ենթական:

200. 172. 9-14 «Ոչ ունի ճարտարութիւն մեր բանփառաւորութեան յոյսը լեզուաւ, եւ ոչ բարբառս՝ վերնազարդս, այլ ունիմք բանս յայտնիս, ոչ պաճուճազարդ, անաւգուտ բարբառովք, այլ ուրախարարք եւ հանգուցիչք ճառիւք, որոց ոչ ի բարբառոց է դեղ վայելչութեանց իւրեանց, այլ ի մեկնակ ճշմարտութենէ անտի ունի զպատիւ փառաւորութեան իւր»։ սկզբում եթէ ենթական փառաւորութիւնն է, ինչպէս յուշում է ունի եղակին, ապա երեք ձեռագրի բանս հարցականն է ուղիղ խնդիրը. իսկ եթէ բանփառ ուղղականն է ենթական, ապա ունի եղակին պիտի լինի ունին, որ չենք կարծում, եւ էջատակում չկայ: Ճախարակեայս յոգն. հարց. որոշիչը յոյս-է տակիս, որ ճիշտ է բանս յոգնակի հարցականը որպէս ուղիղ խնդիր: — Եթէ ուրախարարք եւ հանգուցիչք ածականները մտնիւք յոգնակի գործիականի նախադաս որոշիչներն են, ապա ճիշտ են էջատակի ուրախարարք եւ հանգուցիչ անակիները. իսկ եթէ բանս ուղիղ խնդիր (յոգն. հարց.) նախադաս որոշիչներն են, ապա պիտի լինէին լրիւ համաձայնած, որ չկայ էջատակում: — Ո՞րն է ունի-ի ենթական. որոց յոգնակին, որի յարաբերեալն ըստ մեզ մտնիւք-ն է, թեւադրում է, որ ճիշտ է էջատակի երկու ձեռագրի ունին յոգնակին, ըստ որում նախադասութեան իւր վերջին բառը պիտի լինի իւրեանց. առանց այս էլ, աւելի ճիշտ է էջատակի իւրոյն-ն ըստ փառաւորութեան սեռականի:

201. 173. 18-20 «Սոյնպէս են այլք, որ ի մէնջ ասացաւ, եւ Աստուծոյ զաւրութեամբն կարգեալ կան»։ որ-ի յարաբերեալն է այլք յոգնակին, ուստի՝ ասացան, որ ձեռագրեր ունեն էջատակում: Ճիշտ է կան յոգնակին: Կամ էլ որ-ը նախապէս որ[պէս] էր, որի դէպքում ճիշտ կը լինէր ասացաւ անակին որպէս միադիմի:

202. 174. 3-4 «Թեւրեւս ասիցէ ոք, թէ մարքիցէ ի նոցանէ մեկնել ի միմեանց»։ ճիշտն է մարքիցէ [] նոցա. նոցա-ն էջատակում է. էջատակում է նաեւ ի, որի իսկութիւնը յայտնի չէ:

203. 174. 6-7 «Զոր ի մեր ձեռս առեալ է եւ մեք իշխեմք գնացան, որչափ կարող ամք ամեմք զմտաւ մեկնել»։ առեալ-ի փխ նախընտրելի է ձեռ-ի տուեալ-ը (մէկն էլ ունի տուեալ), ներգործական սեռի, եւ տուեալ է-ի ենթական իրականում Աստուծոյ է: — իշխեմք գնացան-ն հասարակ զբարձր էլ չէ. ձեռագրեր ունեն անել եւ գործունէն. ճիշտը մեզ թւում է «իշխեմք անել գործունէն զնոցանէ»: — (,) է պէտք է-ից եւ եմք-ից յետոյ:

204. 174. 16 «Ձոր ասէ Սաղմոսին, թէ՛ ...» ճիշտը կը լինէր [ի] Սաղմոսին կամ Սաղմոս[ի]ն, ներգոյական կամ ուղղական, որ էջատակում չկայ:

205. 176. 1 «Յստակ իցէ երկինք յամպոյ»։ իցէ եզակիի հետ ճիշտն է մէկ ձեռքի երկինք եզակին: Չկայ իցեմ յոգնակի վջատակում, որպէսզի երկինք ենթական արդարանայ, որքան էլ անեզական լինի:

206. 177. 2-3 «Լուսաւորքն մեկնել զտիւ եւ զգիշեր հաստատեցան, եւ վերադոյնն ասէ ի լինել զլուսոյն առաջնոյ»։ մեր կարծիքով՝ «աստէ [ ] լինել [ ] լուսոյն առաջնոյ», այսինքն՝ «ասում է, թէ նախ լոյսն է եղել (կամ ստեղծուել)» նախքան լուսաւորները:

207. 177. 10-11 «Ձի գտուերն, զոր ի տուէ տեսնեմք, սոյն է եւ ի խաւարն, որ լինի ի գիշերի»։ գտուերն հարցականի փիւ, որ ոչ մի ստորոգեալի ուղիղ խնդիրը չէ, պիտի լինի ստուերս, ձգակի ուղղական (-ս յօդով), որ վջատակում է: — Ի խաւարն, եթէ ներգոյական է, պիտի լինի ի նախդրով ձգակի տրական՝ ի խաւարի[ն], քանի որ խաւար գոյականը ի հոլովման վ: Իսկ եթէ ուղղական պիտի լինի որպէս վերագիր, ինչ անելորդ է:

208. 177. 19-178. 1 «Ոչ այլ ինչ է գիշերն, այլ ստուեր տարերցս լուսոյն, զի որ ինչ կայ ընդ երեսաց լուսոյն, նա է պատճառ երեւելոյ խաւարին»։ զարմանալի է, որ գիշերը, իբր, «ստուեր տարերցս լուսոյն» է. տարերցս լուսոյն-ի փիւ ձեռագրեր ունեն արարածոց, որ մեզ ճիշտն է թւում: 178. 2-ում կարգում ենք՝ «նոյնպէս լինի եւ գիշերն ի մտանել լուսոյն» եւ տ. 5-ում՝ «խաւար փախստական լինի յերեսել լուսոյն», որոնցից երեւում է, որ գիշերը «լոյսի տարերի ստուերը» չէ: — Անհասկանալի է ընդ երեսաց արտայայտութիւնը քերականութեան՝ ընդ նախդրի եւ երեսաց-ի հոլովի տեսակէտից:

209. 181. 1-3 «Երեւարեայ ժամանակի յորժամ յստակ եւ պարզ եւ վճիտ երեսեացի զյստակ պարզոյ յայտ առնէ» (լուսին)։ էջատակում կայ յերեւարեայ, որ հաւանաբար ճիշտն է երկարեայ բառի տեսակէտից, փիւ երեւարեայ. ինչ վէ լինի, յ- նախդրն անհրաժեշտ է. ժամանակի տրականի փիւ անհրաժեշտ է եզակի ներգոյական: — (,) չէ պէտք երեսացի-ից յետոյ:

210. 181. 13-14 «Մի՛ ելցէ ի տանէ Կրթալ աշխատել բխայոյզ կամ յանձրեւածին ժամանակի»։ վջատակում չկայ [ի] նախդրը, որ անհրաժեշտ է ժամանակի տրականի (ներգոյականի) նախադաս որոշիչ բխայոյզ անականի առաջ, ինչպէս երկրորդ նախադաս որոշիչը՝ յամանակին, ստացել է յաջորդ ժամանակի-ինը:

211. 182. 8 «Աստուածային բանն»։ մէկ ձեռ. եւ տպ-ը ունեն աստուածեղէն, որ դասականն է, քանզի դասական գրաբարում

«Ային ածականի մասնիկին տեղ դէմ, ւոր, կան կը զործածուի: 2. օր. Աստուածեղէն, մարդկեղէն, ո՛չ թէ՛ աստուածային, մարդկային» (Թոռն., հատ. Բ, Քանի մը տեղեկութիւն, էջ 18): Տող 13՝ «աստուածեղէն գրոց»:

212. 182. 14-15 «Վիճակք իմն, ասեն, բաժանի ի նոցանէ». ճիշտն է ձեռագրերի բաժանին յողնակին՝ ըստ վիճակի յողն. ենթակայի:

213. 184. 1-3 «ի գիտողաց գաստեղագիտութեան եւ ի մեկնչաց յաստեղատանցն, ուստի զճնունդն բաշխեն բաղում իրք վրիպեն». գոյականաբար զործածուած ենթակայական դերբայների խնդիրը սենականն է. «Ոնդիր սեռի ամէնքն ալ հաւասարապէս սեռական կ'առնուն՝ իրբեւ թայի մասն» (Վ. Չարլիս.-Այտն., Քեր., 415, Դ). ուստի՝ [ ]աստեղագիտութեան: Հմմտ. «իբրազէտք իրացս այսոցիկ» (209. 5-6): մացի այս, բնագորով պէտք է ստուգել, թէ ճիշտը որոշ ձեռագրերի գտաւղաց կամ գտողաց-ը չէ՞: — Յաստեղատանցն բացառականը՝ հնարաւոր չէ ի մեկնչաց անբամի կամ բառի հետ. եթէ բառը ճիշտ է, պիտի լինի նոյնպէս սեռական: Բայց ձեռագրեր ունեն աստեղագիտացն եւ աստղագիտացն, որ պէտք է ստուգել բնագորով: — Զճնունդն սեղակիի փխ յարմար է ձեռագրերի զճնունդն [ն] յողնակին, քանի որ խօսքը մարդկանց ծնունդներին է վերաբերում: — Բայխեն-ից յետոյ (,) է պէտք:

214. 184. 6 «Անպէս մասունս կոտորեցին զրոպէսն». ձեռագրեր ունեն պէպէս ու այնպէս եւ ի նախդիր. սա անպարման պէտք է՝ «ի մասունս կոտորեցին զրոպէսն»:

215. 184. 7-8 «Զոր առաքեալն ասէ, եթէ՛ “յանկարծակի իբր գալան թաւթափել”». էջատակում նշուած տեղում՝ 1 Կորնթ., ԺԵ, 52, տպագիրն ունի յակամ ճիշտ ձեւը. յակամ քարթափել-ը յայտնի արտայայտութիւն է:

216. 184. 9-10 «Որ ծնանի յայն ի մի, ասեն, յընդադաւտ որպէս ժամուն». յայն ի մի-ն անհասկանալի է. մէկ ձեռ-ի յայնմ ներգոյականը յարմար է, իսկ ի մի-ի փխ ձեռ-եր ունեն միայն, որ նոյնպէս յարմար է: — Ըստ ՆՀԲ-ի՝ ընդ աղաւտ-ը մակբայ է «մօտաւորապէս». բայց եւ ածական է յետդասական վիկայութիւններով, որով կարելի էր ենթադրել թէ նրա յ- դիրը ժամուն տրականի (°) նախդիրն է, որով կը ստացուէր ներդոյական, բայց որպէս-ը խանդարում է. ասելի յարմար է «[ ] ընդ աղաւտ որպէս [ի] ժամուն»: Յայնմ-ը հաստատուում է տ. 11-ի «որ ծնանի ի միւսումն» ներգոյականով:

217. 184. 13 «Շրջի տուն ի տանէ եւ տեղի ի տեղուցէ». թէեւ էջատակում չկայ, քայց ըստ մեղ ճիշտն է «[ի] տուն փ տանէ» եւ

«[ի] տեղի ի տեղւոջէ»: Սովորաբար լինում է տանէ [ի] տուն, ի տեղուոյէ [ի] տեղի, որոնք նոյնպէս մերժելի են:

218. 184. 15-18 «Շւ գրորոբակ պատկերացն աստեղատանցն յերկոտասան մասունս բաժանեն, քանդի ըստ թուոյ երեսուն աւուր կադմեալ է գրուորակսն [...] արորակին». գրուորակ եւ բուրակիմ եւ պակիները յուշում են, որ ճիշտն է գրուորակ[ի]մ ւեզակին, թէեւ էջատակում չկայ:

219. 184. 17 «Արեղակն տարւոյ տարի դայ շուրջ գերկոտասան աստեղատամբքն». ըստ մեզ՝ դասական չէ տարւոյ տարի-ն, փիս [ի տարւոյ ի տարի]:

220. 184-185 «Երկուտասան մասն յերեսուն մասն բաժանեն եւ զմի մի յերեսուն մասանցն ի վաթսուն ժամս կոտորեն». ճիշտն է երկու ձեռ-ի գերկուտասան-ը, որոնք մասն-ի փիս ունեն նաեւ մասնն, որ լաւագոյն է:

221. 186. 14 «Մերձենալն եւ պատահելն նոցա ի միմեանց». երկու բայերից եւ ոչ մէկը քացառական խնդիր չի աւելում. ձեռագրեր ունեն ի միմեանս լաւ ընթերցուածը մերձեմալ-ի համար, իսկ միմեանց-ը յարմար է պատահելին:

222. 187. 9 «Մթանչանամ ընդ այնց, որ հաւատան նոցա զկեանս իւրեանց». ճիշտն է ձեռագրերի այնս հայցականը սքանչանալ (եւ գարմանալ) բայի հետ: Տե՛ս դիտ. 81:

223. 187. 13 «Ձր՞նչ կեանք լինիցի նոցա յաշխարհի». ճիշտն է երեք ձեռ-ի լինիցիմ յոչնակին կեանք անեզական ենթակայի հետ:

224. 188. 1 «Մերկանայ յարոյ անտի իւրմէ». քաղմաթիւ ձեռագրեր ունեն յասուէ (որ դասական հոլովմամբ ճիշտն է), յասուէ, յասուէն, յասուէ: Քերականութիւնները սովորեցնում են, որ ար-ը յասուէն, յասուէ: Քերականութիւնները սովորեցնում է: 189. 2 «առատարեր է ու հոլովման է եւ իր Բ տառը կորցնում է»: 189. 2 «առատարեր է արոյ», իսկ 4 ձեռ. ունի ճիշտ ասու գործիականը, երեքն էլ ունեն արոյ, որ ձեռով սխալ է, բայց հոլովով ճիշտ է. առատարեր արձականի խնդիրը լինում է գործիական, ինչ. առատ-ինը՝ «Որ առատն է գուարթուքեամբ» (Հոռմ ԺԻ 8):

225. 189. 7 «... Յանանոց, որ առ մեզս բառաչիւն առնին». բառաչիւն հայցական հոլովով խնդրի հետ ճիշտ է երկու ձեռ-ի առնեն ներգործականը, եւ պատահական չէ, որ ձեռագրեր դրանց փիս ունեն բառաչեն, եւ տպ-ը՝ բառաչեն:

226. 190. 3-4 «Ոչ մինչեւ ցայս վայր ձգեն զանհամ պատմութիւնսն, այլ մինչեւ եւս, որ ամենեցուն յայտնի է». մինչեւ եւս-ը թերի է. նրան պակասում է ձեռագրերի յայս կամ ցայս-ը՝ որ-ի յարարերեալը:

227. 190.14-15 «Կիսաքն երազընթաց դնացիւքն հասանեն զմիմեանս» . էջատակում չկայ, բայց ճիշտն է [ի] (կամ առ) միմեանս . հասանել չէզոք բայը որոշեալ հայցականով դրուած ուղիղ խնդիր չի առնում :

228. 190.18 «Զաւրութիւնն իմն մեծ ունին գնացք նոցա» . իմն անորոշ ածական որոշիչ ունեցող անդամը չի կարող միաժամանակ որոշելիութեան նշան — յօդն ստանալ, ոչ էլ անորոշ (կամ գ— նախդիր չունեցող) հայցականը կարող է յօդ առնել . ուստի՝ գաւրութիւն[ ] իմն, հայցական :

229. 195.4 «Մեկնութիւնն նշանացն եղեւ կատարումն առաջին բանիւքն» . ճիշտն է մէկ ձեռն-ի սեւ տպ-ի մեկնութեան, իսկ մէկ ձեռն . էլ ունի մեկնութեանն, որ սղոնէ տեռական հոլովի տեսակէտից ճիշտ է : կատարումն քառը գոյական է, սեւ բնադրի «Մեկնութիւնը... վերջ եղաւ»—ը հայերէն : էջ :

230. 196.4-5 «Մեծասքանչ զարմանալեաւք բաժանին կարգ ժամանակացն» . ճիշտն է 7 ձեռն-ի կարգէ յողնակին բաժանին յողնակիի հետ :

231. 202.1 «Մի վերայ ամեայնի մասանց աշխարհիս ցուցանէ զծագումն» . ճիշտն է երկու ձեռն-ի ամեայն—ը, որ մասանց-ի նախադաս որոշիչն է սեւ պէտք է անհոլով կամ ուղիղ ձեռով մնայ :

232. 202.3-4 «Որ գնակեալ իցեն անդ յաշխարհն Հնդկաց եւ կամ աստ ի Բրիտանիա աշխարհիս» . յաշխարհն հայցականը պիտի լինի տպ-ի յաշխարհին ներգոյականը, ինչպէս թեւադրում են անդ, աստ եւ ի... աշխարհիս, ինչպէս «ի ստորին աշխարհին հարաւոյ բնակեալ իցեն» (214.10-11) :

233. 202.4-8 «Միակշիռ տեսանեն զծագելն արեգակամն, զի ոչ յորժամ գտանէ առ արեւմտեայս նուագի ինչ ի մեծութենէ անդի առ արեւելեայս սեւ ոչ յորժամ ծագէ առ բնակչաց արեւելեայց թերի ինչ սեւ պակաս փրեւեսցի բնակչացն արեւմտեայցն» . բնադիրը կադմողը յաճախ նախընտրել է արեգակն գոյականի — յօդն ստացած ձեւերը, էջատակում թողնելով անյօդները, մինչդեռ հակառակը պիտի լինէր : — Գտանէ-ի փոխ 4 ձեռն . ունեն մտանէ, որ ճիշտն է, ինչպէս յուշում է ծագէ-ն : — (,) է պէտք նուագի-ից առաջ : — Առ բնակչաց արեւելեայց-ում բնակչացն աւելորդ է, սեւ քանի որ «մօտ» նշանակելու համար առ նախդիրը պահանջում է յողնակի հայցական, ինչպէս նախադասութեան մէջ առ արեւմտեայս, ուստի պիտի լինի առ [ ] արեւելեայց[ս] : — Ինչպէս արեւելեայց—ը, որից յետոյ՝ [ , ], յօդ չունի, աճապէս էլ արեւմտեայցն պիտի լինի առանց յօդի, ինչպէս ձեռագրերում Ա ըստ էջատակի : — Բնադրում գերեշխողը անտի-ն է, իսկ այստեղ կայ անդի, որ դասական ուղղադրութեամբ էջ :

234. 202. 11-12 «Մի՛ քան զչափ կանգնոյ միոյ երեւի շուրջանակի շրջան նորա տեսողացն, կարծեսցուք, թէ անչափ միայն իցէ»․ մի՛-ից յետոյ անհրաժեշտ է ձեռադրերի վասն զի-ն, որ ենթադրել է տալիս կարծեսցուք-ը:

235. 203. 13 «Հանդերձ եզնդաւն, որ վարիցն զնոսա»․ Թոռն․, Բ, էջ 56 «Հանդերձ եզնողաւն որ վարիցն», որ միակ ճիշտն է, եզակի. սուրբ վարիցն-ը վրիպակ է: — Բնադրակազմողը եզնդաւն բառի ծ. մէջ դրում է՝ «Սրբադրութեան մանրամասները տե՛ս Մուր․, էջ 231-233», ուր, սակայն, յիշատակուած չէ Թոռն․, Բ, էջ 56-ի եզնդաւն, որի ծ. մէջ (ծ. 3) ասուած է՝ «Դրինք ըստ այլ օր. եզնդ, ի, աւ, եզնարած, անդէորդ»: Բացի այդ, Կ. Մուրադեանն իր նշուած աշխատութեան էջ 231-ի ծ. 59-ում ասել է՝ «ՆՉԲ, Ա, 647: Բառարանագիրները եզոզ ձեւն են բացատրում, տեքստում եզնդ է»․ պիտի ասուէր, որ Առձեռն բառարանն ունի եզնդ/եզոզ շառաջուածք:

236. 205. 9-10 «Յորժամ երեւեսցի եւ տարածեսցի ի վերայ աւդոյ զլոյսն»․ մերժուել է սույ-ի տարածեսցէ ճիշտ ձեւը. տարածել կամ տարածանել բայը ներդրածաձեւ խոնարհում ունի, 'եւ այտեղ ներդրածական սեռն է անհրաժեշտ, որի ուղիղ խնդիրն է զոյս-ը, կամ էլ՝ տարածեսցի... [ ]ույսն:

237. 205. 11-12 «Որ ի նորա Հանդիպութիւն կարկառեալ յառեալ հայեցին»․ հայեցին-ը, եթէ վրիպակ չէ (պիս հայիցին<sup>o</sup>), բացայայտ սխալ է, քանի որ կայ հայիւ բայ, ի խոնարհման, եւ որ թէ \*հայիւ: Ձեռագրեր ունեն հայիցին եւ հայեցին, որոնք խոնարհման տեսակէտից ճիշտ են: Իսկ սույ-ի հայեցին-ը նշուած չէ էլատակում:

238. 206. 2-5 «Եւ ուստի կարող էր [...] շուսուորել, եթէ ոչ զի [...] արձակէր»․ ուստի-ն պիտի լինի ուստի<sup>o</sup>, ինչպէս սույ-ում է եւ Թոռն․, Բ, էջ 59:

239. 206. 15-18 «Ոչ Հանապաղ լիով երեւի լոյսն իւրոյ մեծութեան, այլ երբեմն կատարեալ չի թլուրն բոլորակաւ երեւի լոյսն իւր, եւ երբեմն պակասեալ եւ մաշեալ ի լուսոյն»․ ձեռագրեր եւ իւր, եւ երբեմն պակասեալ եւ մաշեալ ի լուսոյն», որ Թոռն․, սույ-ը ունեն «երեւի լուսին ի լոյսն իւրոյ մեծութեան», որ Թոռն․, Բ, էջ 59, ծ. 33-ում մեկնաբանուել է «պիսկ. լուսով իւրոյ մեծութեան»: Արդարեւ, լուսին ենթական անհրաժեշտ է, քանի որ հեղինակին վաղի չէր ասել լոյսն... երեւի... երբեմն պակասեալ եւ մաշեալ ի լուսոյն:

240. 207. 13-15 «Յորժամ առ սակաւ սակաւ սկսանի լուսինն պակասել, մաշի պակասի սպառի եւ ամփոփի, զի յայսմ կերպարանաց լուսնի առցուք իրատ»․ երկու ձեռ. ունեն յայս, որ նախապէս յայս[ց] էր, ըստ կերպարամաց-ի, որը յոգնակիւածեւ որոշիչ է պահանջում, նոյնիսկ եթէ անեզական է, բայց այտեղ յոգնակի է,

քանի որ ներկայացնում է լուսնի փոփոխութիւնները: Տ. 21-ում կարդում ենք կեանք մերոց, յողնակիւսնէ մերոց, անեղականի հետ:

241. 209. 5-10 «Մրադէտք իրացս այսոցիկ այնքիկ են, որք ընդ լուսով լուսնին ննջիցեն, զի առաւել լսոնաւութիւն լինի ի գլուխս նոցա». մէկը կարող է ննջել լուսնի լոյսի տակ եւ կրել հեղինակի նշած հետեւանքը, բայց դրանով գեո «իրադէտ իրաց» չի դառնայ: Նախընտրելի է Թոռն., Բ, էջ 61-ի «Եւ (որք) իրադէտք իրացս այսոցիկ են՝ ասեն, որ ընդ լուսով լուսնին ննջիցեն, առաւել լսոնաւութիւն լիցի ի գլուխս նոցա»: Ուստի իրադէտներն են ասում, թէ ի՛նչ է տեղի ունենում:

242. 209. 19 «Ամպ վի վերայ ամպոց զիզանին». մէկ ձեռ. եւ տպ-ը ունեն ամպի, որ միակ ճիշտն է դիզանին յողնակի ստորոգեալի հետ:

243. 210. 4 «Մերձաւորք եւ սահմանակիցք են ի մեղուցս». ընդ-դժուածը քնադրակաղմողի սրբադրութիւնն է ձեռագրերի եւրոպաց-ւոց-ի փխ. սխիտի նկատենք, որ նախորդ երկու դոյականները, թէեւ ստորագրելիական վերադիրներ, սեռական հոլովով խնդիր են պահանջում. թէ չէ՝ կը ստացուի, թէ մերձաւոր եւ սահմանակից են նեղուցներում:

244. 211. 10 «Յայսմ փոքուցս, որ պատմեցաւ, ամցուք զմտաւ զմեծամեծ գործս Աստուծոյ». տ. 4-5-ում հեղինակն ասել է «բազումք այնք են, որ մնացին ի մէնջ» առանց պատմուելու. ուստի նա շատից՝ քիչ, փոքր քան է պատմել իր ճառում: Շարահիւսութեան տեսակէտից ի՞նչ կապ կայ յայսմ, փոքուցս եւ պատմեցաւ, եզակի ու յողնակի, ձեւերի միջեւ: Ածցուք զմտաւ-ը բացառական խնդիր է պահանջում: Ձեռագրերի տուեալների հիման վրայ վերանայելի է շարահիւսութիւնը:

245. 212. 1-5 «Բայց անհամ եւ սնոտի պատմութիւն, որ իրբեւ զբարբանջ ծերութեան զառանցելոյ անկելոյ ի մտաց իցեմ, անչափ ծաղու եւ արհամարհանաց արժանի եմ, զի ամենայն ումեք յայտնի եւ երեւելի է, զի ի ստեղծուածոյ մտաց կարկատեն զստալաւ պատմութիւնն». յողնակի ստորագրեալները պահանջում են յողնակի պատմութիւնի եւ պատմութիւնս, որոնք ձեռագրերում են: Ձենք կարծում, թէ յողնակի բարբերը մարդկանց են վերաբերում:

### ՃԱՌ Է

246. 217. 4-5 «Որ թուչիցին ընդդէմ հաստատութեան երկնից ըստ ազդի իւրում». էջատակում չկայ, բայց ճիշտը մեզ թւում է իւր[եանց], ըստ ենթակայի եւ ստորագրեալի յողնակի թուի: Ծն Ա.

20-ում (աղբիւրը) չկայ «բայտ ազգի իւրում»: 219, 2-3 «Բղխեսցեն ջուրք զեռուն կայտառ, շունչ կենդանի ըստ ազգի իւրում», որ ճիշտ է եզակի խնդրի հետ:

247. 218. 2-6 «Ճեպեաց եւ զսակաւանխտ ծովակա՝ բղխել եւ անեցուցանել, եւ ի միջոյ ամենայն խոնաւութեան բղխեաց կենդանութիւն՝ արգէի արգէի թռչնոց երկնէր ծնանել: Մնանի եւ ծով պէս պէս արդս եւ կեպարանս զուղակաց աւ գազանաց». հաւանաբար՝ երկնի, քանի որ ունենք «ծնանի աւ ծով» առանց երկնելու: Նոյնիսկ այս բայի դէպքում երկնէր-ը պիտի լինէր երկնել, ինչպէս ծնանել: Տպ-ն ունի յերկնէ:

248. 218. 12-15 «Ամենայն ջուրք [...] ազգս զեռնոց յերաքան-չիւր խոնաւութեանէ բղխէին, որոց ոչ թիւ լինէր եւ ոչ համար՝ բովանդակելին». ո՞րն է բովանդակելին-ի ենթական՝ արդեօ՞ք ջուրք, թէ՞ որոց-ի լուծեայն որք-ը: Մինչ է նշանակում (')-ը: Ձեռ-եր ունեն բովանդակէր, որի ենթական կը լինէր համար-ը: Երկու ձեռ. ունեն համարով, որով՝ «եւ ոչ համարով բովանդակէին» (երեք ձեռ. բաւանդակելին): Գոնէ պիտի գրուէր համար առանց (')-ի որպէս սուղից խնդիր:

249. 219. 14 Զկոկորդիոս-ի 1-ն դասական չի կարող լինել. ձեռագրեր ունեն դ-ով ձեւեր: 220. 3 դիփիմք, որի 1-ն պիտի լինէր դ, թէեւ էջատակում չէ, բայց 224. 6-ում մէկ ձեռ. ունի դեղիփիմք ճիշտը, հ-ով եւ դ-ով:

250. 222. 10-12 «Մարմին կարաւտ է դարմանոյ աւղոյ, որ մըտանէ միախառն խառնուածով, եւ լինի իբրեւ կերակուր ի կենդանութեան». ճիշտն է ձեռագրերի ի կենդանութիւն հայցականը «կեան-նութեան». ճիշտն է ձեռագրերի ի կենդանութիւն հայցականը «կեան-քի համար» իմաստով: Ի հարկէ օտը մարդու կեանքում կամ կենդանութեան ժամանակ է սէտք, սա տարրական է. հեղինակի միտքն այն է, որ օտը կենդանութեան համար է՝ առ ի կենդանութիւն:

251. 224. 1 «Ի սիկս գետոց աւ յատակս ծովակաց ի խորս տեղիս լինին». ճիշտն է [ի] յատակս, թէեւ էջատակում չկայ. ոչ մի լուրջ պատճառ կայ, որ յ- տառով սկսուող գոյականների ներդոյականը ի նախդրի չստանայ: — Ճիշտն է նաեւ խոր եզակին, որ ձեռագրերում է, քանի որ նախադաս որոշիչը չի համաձայնում յոչնակի հայցական որոշեալի թուին:

252. 224. 18 «Որ միշտ ի ծով աշխատիցին». ճիշտն է ձեռագրերի ի ծովս կամ ի ծովուն ներդոյականը, քանի որ ծով-ը ՈՒ հորովման է:

253. 225. 3-4 «Ձամենայն աւուրս կենաց իւրոյ ի խոնաւ բնութեան հանեալ իցէ». ճիշտն է չորս ձեռ-ի իւրոց-ը կենաց անեզականի հետ, թէեւ սա եզակիի իմաստ ունի: Տե՛ս դիտ. 223, 240:

254. 225. 15-16 «Եւ այսր ամենայնի խառնաղանջ ղեռնոց ոչ մի բարք եւ ոչ մի քննութիւնք է» . եթէ այսր ամենայնի-ն գեռնոց-ի նախաղաս որոշիչն է, ապա ճիշտն է ձեռագրերի այս ամենայն-ը կամ այսց ամենայն-ը: — Բարք եւ բնութիւնք յոգնակի երկու ենթակաների հետ դասական չի կարող լինել է եղակին . պարտադիր է 5 ձեռ-ի բնութիւն-ը, եղակին մի «մէկ» որոշիչի հետ . նրա հետ համաձայնած կը լինի է-ն: Լաւագոյնը կը լինէր [եմ] յոգնակին, որ էջատակում չկայ:

255. 227. 8-9 «Որ տնանկն է ի մէնջ, հարստին կայ ի ծառայութիւն» . ճիշտն է երեք ձեռ-ի ի ծառայութեան ներդրականը կալ բայի հետ, ինչ . «Ջերկոտասան ամ ի ծառայութեան կացեալ» (Ծն ժ Դ 4), «Ի ծառայութեան կացուցին» (Ս Մակ Ը 10), «Ամենեցուն զանձն ի ծառայութեան կացուցի» (Ս Կորն Թ 19): 231. 6-7 «կացուիք ի ստոյգ մշմարտութեանն եւ յանպաճոյճ միամտութեանն»:

256. 228. 4-5 «Պատիժք պատուհասից, որ յայտնելոց է ի վախճանի» . եթէ յայտնելոց է-ն ներդրական լինէր, ապա որ-ը կը լինէր գոբ: Եթէ կրաւորական է, ինչպէս կարծում ենք (քանի որ ենթակայ էլ չունի), ուստի ճիշտ է ձեռագրերի եմ յոգնակին՝ ըստ որ[ք]-ի, որի յարաբերաւը պատիժք կամ պատուհասից է:

257. 229. 10 «Զխեցգեղունոյ նման է, որ նենդութեամբ մերձենայցէ առ իւր մերձաւորսն» . գուցէ վրիպակ է ընդգծուածի գ- նախադիրը . նման-ը տրական է պահանջում՝ խեցգեղունոյ, որ տպ-ում եւ ձեռագրերում է:

258. 229. 14-15 «Բաւական համարեսցուք զայն, ինչ որ արդարութեամբ ասացեալ ունիցիմք» . տպ .ն ունի «... զայն՝ ինչ...», իսկ Թոռն . Բ, էջ 64, «... զայն ինչ՝ զոր...» . ինչ որ-ը աշխարհաբար է, ևւ քանի որ ունիցիմք-ը (որի դիմաց նախընտրելի է Թոռն-ի ունիմք-ը) ներդրական է, հարկաւոր է գոբ:

259. 230. 11-12 «Կալ մնալ ի միում բանի կամ ի միում խորհրդի ոչ երբէք յաւժարեն, այլ այլիք ընդ այլոյ երեւին» . Թոռն . Բ, էջ 64-ը ապ-ի այլիք յոգնակին (չուեւայն) ուղղել է այլ, որով ստացուել է շատ յայտնի այլ ընդ այլոյ դարձուածքը, որ նա ծ . 22-ում բացատրել է՝ «Կ'երեւին ուրիշ քան եղածը», մինչդեռ քննարկի այլիք ընդ այլոյ-ն նշ . «ուրիշներ (երեւում են) ուրիշի (կամ ուրիշ բանի) փոխարէն», որ անհեթեթ է: Յոգնակի ենթակայի ղէպքում էլ այլ-ը մնում է անփոփոխ . «Այլ ընդ այլոյ ի միմեանց մալորեալք, այր յեղբարէ իւրմէ անջատելով ցրուեցան» (Սք 314. 10-11):

260. 231. 10-11 «Որպէս ևւ զՅակովբ, զի միամիտ էր յարդարութիւնն» . ճիշտն է ձեռագրերի յարդարութեան ներդրականը:

261. 232. 2 «Որ է ջուրսն գտանին ի ծովու»։ Հաւանաբար ի ծովու-ն աւելորդ է . իզուր չէ, որ «Ի ջուրսն գտանին» բառերի փխ ձե-  
նագրերը ունեն «չըջին ի ծովու», որի փչպըում ի ջուրսն ներգոյականն է  
է աւելորդ դառնում :

262. 232. 17-18 «Ոչ ոք համարձակի յանցանի յայոց բնակետոյ» .  
ընդդէմաբար անցանի բայն է յ- նախորդով, որ աւելորդ է, քանի որ  
համարձակիմ բային յաջորդող անորոշ դերբայը ի նախորդ չի առ-  
նում, իսկ գոյական խնդիրը դրւում է ի նախորդով հայցական . այս  
է կանոնը Ս . Գրքի բնագրում :

263. 233. 13-14 «Ձի գրնկերին գրկել զլանալ մարթասցումք» . մէկ  
ձեռ . եւ տպ-ն ունեն գրկեալ, որ թոռն . , Բ , էլ 66-ը ծանօթագրու-  
թեամբ դարձրել է գրկել, որով գրնկերին փոխանուն սեռականը դառ-  
նում է գրկել եւ զլանալ (բայերի խնդիրը : Ձրնկերին նշ . «ընկերոջ  
ունեցուածքը», որ Ես Ե 8-ում է, սակայն համիցեմ ստորոգեալով՝  
«զի գրնկերին հանիցեն», որ կանոնաւոր է : Ձրնկերին հայցականը,  
նշուած իմաստով, չի կարող լինել գրկել-ի խնդիրը, քանի որ այս  
բայի խնդիրը իրի անուն չի լինում, այլ միայն՝ անձի անուն . այս  
բայի խնդիրը իրի անունն իմացուած լինելէն իմացուող գամնիմ = «զիս» հայ-  
ուր ոչ գրկեցի-ի խնդիրը լուրջաբար իմացուող գամնիմ = «զիս» հայ-  
ցականն է, եւ ոչ գամնիմայն-ը : Ու ճիշտ ենք համարում գրկեալ-ը,  
որ խնդիր չունի այս նախադասութեան մէջ :

264. 233. 15 «Յոյժ տեղեկացեալք եւ հմուտք ան գետն անդըն-  
դայինք ունել զիւրաքանչիւր սահմանս կայանից, քանզի արտաքոյ,  
քան զամենայն բնակութիւն նաւագնաց գնացից ծովուն շրջին» . մի-  
քան զամենայն ակներեւ է 7 ձեռ-ի կէտքն եւ տպ-ի կէտք-ը (որ էջատա-  
անգամայն ակներեւ է 7 ձեռ-ի կէտքն եւ տպ-ի կէտք-ը (որ էջատա-  
կում նշուած չէ) : Գետն-ը՝ գուցէ վրիպակ է . տե՛ս դիտ . 266 :

265. 233. 17-18 «Քանզի յայնմ ծովու ան, զորոյ ոչ ոք երբէք  
կոխեցին քմկանունս նաւք» . տպ-ն ի՛նչ ունի աղաղակելիօրէն անտեղի  
ոք-ը, որ թոռն . , Բ , էլ 67-ում պիտակցաբար վտարունել է : կոխե-  
ցիմ-ի ենթական նաւք-ն է : Ոք-ը գուցէ ուրիշ է :

266. 234. 1-3 «Քանզի յանապատի ծովուն եւ ի ներքին կղզիսն,  
յոր ոչ ոք երբէք անց կոխեաց ոտն մարդոյ եւ բնակութիւն նոցա»  
(այսինքն՝ կիտաց) . ձեռագրերը թոյլ են տալիս առանց միջամտու-  
թեան հասկանալի դարձնել նախադասութեան կոխեաց . . . Անցա բա-  
ռերի իմաստը . այն է՝ « . . . յոր ոչ ոք երբէք անց, [եւ ոչ] կոխեաց  
ոտն մարդոյ, [է] բնակութիւն նոցա» : Նոցա-ն մարդիկ չեն, այլ՝  
կէտ ձկները, որոնց անունը բնագրում գետն է (տե՛ս դիտ . 264) :  
Նախընտրելի է՝ «յոր ոչ [ ] երբէք անց [եւ] կոխեաց ոտն մարդոյ»

կամ առանց [ել]—ի: Պատահական չէ, որ 134.5-6-ում կարգում ենք. «Արդ՝ յարձմ ծովու յորով բնակեալ են կէտք»:

267. 236.3 «Նմանիցես», չէզոք սեռի, պիտի լինի նմանեցիս. ինչպէս սոս-ում:

268. 236.3-4 «Գտանիցիս յանցուցեալ զպատուիրանան հակա-  
ռակ արարչին». 235.17-ում կարգում ենք «համարձակիմք անցանել  
զպատուիրանաւքն Աստուծոյ»: Այլ գրուածքներում եւս անցանել  
(+ գ- նախդիր եւ գործիական) բայը չփոթուել է յանցանել բայի  
հետ, որ այսպիսի փնդրառութիւն չունի: Թոռն., Բ, էջ 68, ծ. 25,  
«Գտանիցիս յանցուցեալ (կամ անցուցեալ) զպատուիրանան»: Քիչ  
մը վեր՝ անցանել զպատուիրանաւք. այսպէս սովորաբար կը գործած-  
ուիք. ոչ միայն սովորաբար, այլ՝ միշտ: Յարմար չէ նաեւ անցու-  
ցեալ պատճառականը: Ձեռագրեր ունեն յանցանելն եւ յանցանել.  
ընտրում ենք յանցանել = յ- նախդիր եւ անցանել, որով գտանիցիս  
յանցանել զպատուիրանաւքն նշ. «պատուիրանադանցութեան մէջ կը  
դտնուես»:

269. 236.14-15 «Զփաղցր ջուրքն, որ սն ի նմա, ոչ այնչափ շատ  
ծծեն նառագայքքն արեղականն, քանզի ոչինչ կարի յամէ անդ». Ի՞նչը  
ի՞նչ չի ծծում: Ձեռագրեր Թոյլ են տալիս գրել զփաղցր ջուրքն],  
որը կը դառնայ ուղիղ փնդիր, եւ ենթակայ կը լինի նառագայքքն  
յողնակի ուղղականը ծծեն յողնակի ստորոգեալի համար:

270. 239.1 «Զկեանս մեր միշտ դատարկացեալ ի բարեաց դտա-  
նին». կրաւորական սեռի ենթական չի կարող լինել զկեանս հայցա-  
կանը, որի փոխարէն ձեռագրեր ունեն կեանք / կեանքս ճիշտ ուղ-  
ղականը:

271. 239.3-5 «Ի քնէ յարարածիս մերում ունիմք զընտանութիւն  
հաճոյիցն զաւտարութիւն չարութեանցն». սոս-ն ունի յարարածոյս  
մերոյ, որի յ- նախդիրը ջնջելով ճիշտն ենք համարում արարածոյս  
մերոյ, այսինքն՝ «ի քնէ արարածոյս մերոյ», ինչպէս 240-241-ում  
կարգում ենք ի բնէ արարածոյ: Եղնիկն ունի «ի բնութենէ արա-  
րածոյ» (24.21-22): — Արարած-ը Ո հոլովման է, եւ նրա յարարածի  
ներդրականն անսովոր է: Առասել եւս յարարածի մերում ներդրա-  
կանի հետ յարմար է Գ. Նահապետեանի առաջարկած (էջ 231)  
տնկեալ-ը, որ կայ չորս ձեռագրում: — Զաւտարութիւն-ից առաջ  
անհրաժեշտ է (քանի որ ստորակէտ չկայ) երեք ձեռագրի եւ-ը:

272. 241.7-8 «Գայ հնազանդի փառնակել ամուսնութիւն ընդ  
դառնազոյն դաղանին». ճիշտն է ձեռագրերի յամուսնութիւն-ը.  
հմտ. «Մառնակի ի մեղս նորա» (Սիրաք ԺԲ 13), «ի գնացս նոցա  
մի խառնակիք» (Եզկ Ի 18):

273. 241. 11 «Եթէ վազվազում ձեռաւք իցէ առ ի հարկանելի...» Նորայր Ն. Բիւզանդացին իր «Տեսութիւն Քննական Բերականութեան Հ. Արսէնի Այտնման» անաւարտ աշխատութեան մէջ գտնում է, որ վազվազուկը դասական շրջանից է, «վազվազուկ կայ յԵփր․, Համար․, այլ կայ յԱռակս, ԺԲ, 19, ԻԱ, 5. Ոսկ․, Մաթ․, Բ, 557, Բրս․, Վեց․, 151 (տպ. վազվազում, այլ Անտոնեանց (ձեռ․) վազվազուկ) (ՀԱ 1987 թ․)։ Մատենադարանի թ. 1657 ձեռագիրն էլ ունի վազվազուկ (ըստ տպ.ի տեղեկութեան)։ Ուստի վազվազումը սրբադրելի է վազվազուկ։

274. 241. 16-17 «Եթէ իժ վասն սիրոյն, գոր ունի առ միւռնիէս, առանց վնասելոյ են թոյնքն, եւ թերեւս հեղու եւ ընկենու ի բաց դթոյնսն...» Տիշտը մեզ թուում է չորս ձեռ-ի իժի սեռականը։

275. 242. 14 «Սուրբն ճառիւք կամիմ կատարել զբանս, զոր խաւսիմս»․ քերականութիւնը եւ իմաստը պահանջում են մէկ ձեռ-ի մաւրիւ եղակին․ խօսքը է ճառի մասին ւ։

276. 243. 1-2 «Սկիզբն ականն այն իբրեւ գրալարի կանաչադեղ բուսանի ի մէջ ծովուն»․ Տիշտը բաղմաթիւ ձեռագրերի այնորիկ սեռականն է որպէս ակամն սեռականի որոշիչը։ Եթէ այն-ը սրբա որոշիչն է, ապա չի կարող Վոյովով չհամաձայնուել։ Չենք կարծում, թէ այն-ը սկիզբն ենթակայի կրկնութիւնն է թարմատարութեամբ։

277. 243. 3-4 «Յընդունել գաւաքսն քաղցրաշունչ, սկսանի խրտանար»․ Տիշտը երկու ձեռ-ի գաւաքսն տեղակին է, քանի որ քաղցրաշունչ ետագաս որոշիչը տեղակի է։ Կամ՝ քաղցրաշունչ[ս]։

278. 243. 8-11 «Այլխաղիեալ կուտեալ կան [...] ցանեալք եւ ցրոսեալք [...] լցեալք եւ զեղեալք [...] համբարեալք եւ ծածկեալք»․ Թէեւ ձեռ-եր չունեն, բայց առաջին երկու անցեալ դերբայներն էլ միևնորի պէս յոգնակի պիտի լինէին։

279. 243. 13-14 «Մի նոցանէն լինի ասրն այն, որ ոչ երբէք ուրեք իմաստունն նարաւտաներկաց կարաց այնպիսի գոյն ներկանել յաշխարհի»․ որ-ը կամ արն դառնում է կարաց... ներկանել «կարողացաւ ներկուել»-ի ենթական, որ արամարանական չէ։ Երեք ձեռ․ ունեն ուֆ․ ուստի գուցէ՝ [գ]որ ոչ ուֆ ... կարաց ներկանել «որ ոչ ոք կարողացաւ ներկել»։ — Այնպիսի-ի փխ ճարտնորելի է տպ-ի յայնպիսի-ն։ Կայ միայն կարմիր ներկեալ, առանց ի նախորդի․ «Մորթս խոյոց կարմիր ներկեալ» (Ելք մե 5, ՎԵ 23)։ Բայց նաև՝ «Կարմրովն ներկելով» (Ելք 1Ե 35)․ գործիականին յաճախ համադր է ի նախորդով հայցականը։

280. 244. 2-3 «Ո՞ր ծանրագինք էին, որ ոչ տուան աշխարհի ի պէտս մերում»․ բաղմաթիւ ձեռագրեր չունեն մերում, որ եթէ իսկական լինէր, պիտի լինէր մեր, քանի որ ի պէտս-ը (նպատակի) հայ-

\*

ցական է. հմմտ. «Կէսքն յանասնոցն ի պէտս արարան» (Եղնիկ 31. 31). Վեց., 244. 4-5 «ի պաշտաւն մարդկան տուան եւ կէսքն՝ ի տե- սիլ սքանչելի, եւ յաի եւ յերկիւղ»:

281. 244. 6-8 «Մարար, ասէ, Աստուած զկէտս մեծամեծս», ոչ զի, քան զկարիւղոս եւ զմեղոս մեծամեծք են, վասն այնորիկ մեծս կոչեաց զնոսս պիւրք, այլ...». մեծս բառի փխ ճիշտն է բաղմամբիւ ձեռ-երի մեծամեծս, ըստ նախորդ մեծամեծս եւ մեծամեծք նոյն բառի: — Կոչեաց ... գիրք-ը կա՛մ պիտի լինի կոչեցին ... Գիրք, կա՛մ կոչեաց ... Գիր, թէեւ ձեռագրերում չկան:

282. 244. 8-9 «Լեւրանց նման են մեծութեամբ՝ վիթխարիք մարմ- նով». նախընտրելի՛ է ձեռագրերի մարմնոցն, այսինքն՝ «մեծութեամբ վիթխարի մարմնոցն»:

283. 244. 11-12 «Այնչափ նշանակերտ ահադին մեծութիւն դա- զանացն ոչ յերեւելի տեղիս ծովուն գտանին». եթէ գտանին բառի վերջինն — գիրք յօշ չէ, ապա ճիշտը կը լինի կա՛մ գտանն, եթէ մեծութիւն-ը հայցական համարուի, կա՛մ գտանի, եթէ ուղղական ու ենթակայ է:

284. 245. 18 «Ապրեսցիս յայն ամենայնէ վնասակար դադանաց». եթէ ամենայնէ բառը նախորդ յայն-ի հետ գազանաց բացառականի սրոշիչն է, ապա պիտի լինի ամենայն: Իսկ եթէ ամենայնէ-ն բուն դերանուն է, եւ յայն-ը նրա որոշիչն է, ապա յայն-ը պիտի լինի յայնմ (կամ յայսմ), որոնք կան ձեռ-երում: Եթէ յայն[մ] ամե- նայնէ-ն բուն դերանունն եւ խնդիր լինէր, վնասակար գազանաց բա- ռակապակցութիւնը կը լինէր սեռական: Մակայն կարծում ենք, որ ճիշտն է յայն ամենայն վնասակար գազանաց «այն բոլոր վնասակար դադաններեց», կամ յայն[ց]...:

285. 247. 4-5 «Հատուցանողը լինելոց եմք ձեզ ի սկիզբն տուրն- ջեանն վաղիւ». ի սկիզբն-ի փխ ճիշտը կը լինէր ի սկզբան, ինչպէս ամբողջ ՄԳ-ում, ուր չկայ ի սկիզբն ներգոյական: — Վաղիւ-ի փխ նախընտրելի է տարբեր ձեռագրերի վաղու, վաղուիւն, վաղուի սե- ռականը որպէս տուրնջեանն սեռականի յատկացուցիչը. հմմտ. «ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել» (Ադ 28):

ՃԱՌ Ը

286. 249. 4-5 «Ոչ եթէ ի սանդարամետս Երկրի դուղեալ կային տունկը եւ թոյսք, եւ ապա եկին ելին ի վեր եւ Երեւեցան». դուղիմ-ը նշ. է «լողալ», որ այստեղ յարմար չէր լինի: Մէկ ձեռ. ունի դաղեի (մէկն էլ դաղի), որ նշ. է «թաքնուել» եւ այստեղ անհրաժեշտ բառն է ի հակադրութիւն յաջորդ «ելին ի վեր եւ Երեւեցան» բայերի:

Ձեռ-երի զաւղեալ-ն է պէտք նաեւ 281. 4-ում՝ «կերակուրն, որ դու-  
ղեալ կայցէ ի ջուրսն» :

287. 250. 7-8 «Ոչ յուշ յիշատակի ունին ձկունք, և ոչ տեսիլ,  
գոր ընտրիցէ գրէմս ի դիմաց» . ճիշտն է երկու ձեռ-ի որ ուղղականը .  
տեսիլ նշ . «տեսողութիւն» : 251. 15-ում ասուած է . «Ձուկն զլար-  
մանիչ իւր ոչ գիտէ նանաչել» :

288. 252. 11-12 «Եւ արդ՝ տեսցեն որում շարաբարոյ զազանի  
բերեն զաւրինակ նմանութեան» . ճիշտն է որո՞յ տեսականը, թէեւ  
էջատակում չկայ : Կայ ուրում (կամ իրիք) զաւրինակ բերել զար-  
ձուածքը, որ նշ . «մէկին (կամ մի քանի) նմանուել» . հմտտ . «Նոյն-  
պէս եւ ամենայն հարցն որ յաջորդեցան, [...] բերէին աւրինակ  
վերցնոցս» (Ադ 447. 4-6), «Բերէր զաւրինակ մարմնոյ Աստուածորդ-  
ւոյն» (Ադ 215), «Վի վեր բերին զիւրաքանչիւր աւրինակ րուսոց տե-  
րեւոցն» (Ադ 332), «Բերիցէ... զիւր աւրինակն» (Ադ 330), «Ձնոցիմ  
աւրինակն յանձինս առեալ բարձեալ բերէին» եւ այլն :

289. 253. 15 «Դարձուցում անդրէն ի սոյն յայլ դէմ երկրոր-  
դել» . ճիշտն է երեք ձեռ-ի դարձումէ-ը : Մօտքը վերադառնալու,  
կրկին անդրադառնալու, եւ ոչ թէ մի քան վերադարձնելու մասին է :  
306. 15 «Մի նոյն ճառ [...] դարձում» :

290. 257. 10-11 «Ձմի բնութիւն Խն, քանզի ի ջրոյ են ամենեքին,  
և զմի զնացս եւ զնոյն լոցս ունին ամենեքան» . զմի բնութիւն հայ-  
ցականն անյարիր է են քայի՛հետ, որ մեզ աւելորդ է թուում : Կամ  
էլ մէկ ձեռ-ի մի-ն է՝ ճիշտը :

291. 259. 9-12 «Այլակերպ կերպարանաւք իրքեւ առ ի պէտս որ-  
սոյն պատշաճեալ են մագիլս սուր ևւ հաստաբիտ ունին եւ կտուցս  
կոր եւ սուր ևւ խիստ, եւ թեւս երազուես» . Եթէ պատշանալ են-ը  
ներգործական է, ապա (,) է պէտք մագիլս թառից առաջ : — Ինչպէս  
երագումս հտաղաս որոշիչը համաձայնել է իր թեւս որոշեալի յոգ-  
նակի թուին, տոյպէս էլ սպասելի Կ սուրս (որ մէկ ձեռ-ում եւ  
տպ-ում է), հաստաբիտս (ձեռագրեր ունեն հաստաբեստս), կորս,  
սուրս եւ խիստս, որոնք չկան էջատակում :

292. 261. 9-10 «Բազում իրք ևւ բարք գտանին ի բնութիւնս իւ-  
րաքանչիւր ազգ թռչնոցն» . ազգ ուղղական-հայցական որոշիչի (°)  
փոխարէն ճիշտն է ձեռագրերի ազգացն կամ ազգաց սեռականը :

293. 263. 13-14. «Նմանեացուք առանձնագործ զործոցն մեղուի,  
գոր իւրով իւրում անձինն համբարէ» . գոր-ի փխ նախընտրելի է  
երկու ձեռ-ի որ ենթական, քանի որ մեղուն գործեր չի համբարում  
(գոր-ի յարաբերեալն անհրաժեշտօրէն նախորդ գործոցն բառն է) .  
տ. 15-16-ում կարգում ենք «անձամբ ինքն իւր համբարս համբարէ» :

— Իւրով—ը ստացական ածական է, ճիշտն է մէկ ձեռն—ի իւրովին—ը, կամ՝ իւրել:

294. 263. 16 «Զմաղս մեղերն»․ մեղր—ի դասական սեռականն է մեղու, որ չկայ էջատակում: 284. 12 մեղու խորիսխ:

295. 264. 12-13 «Բարիոք զուկեցաւ մեղու ի Սողոմոնէ յառակս աւրինակացն նորա, եւ իմաստունն եւ Հանճարեղ անուանեաց զնսսա ի դործ»․ ճիշտն է Հինդ ձեռն—ի զմա եղակին, ըստ մեղու եղակիի:

296. 264-265 «Որ Հնարադէտ իմաստութեամբ ի շտեմարանս զմեղերն կազմէ»․ ճիշտը Հինդ ձեռն—ի զմեղրն Հայցականն է: Դիտ․ 294—ում տեսանք, որ մեղր—ը սեռականն է Համարուել բնագրակազմողի սխալ դատողութեամբ:

297. 265. 8-9 «Գտանես յարկս յյարկաւք շինեարս՝ երբք դմբեթակիրս զմիմեամբք յաւրինեարս»․ Թէեւ էջատակում չկայ, սակայն ճիշտն է երիս, ինչպէս ունի Թոռն․, էջ 75, իսկ տպ—ը՝ երբքգմբեթակիրս:

298. 265. 17-266. 1-2 «Մանրաբեռն ծանրութեամբ մեղերն պարուտակատ լաստակոտոր զբուբս մաղոցն առնիցէ, եւ [...] ծորեալ ելեալ հեղուցու»․ տպ—ում եւ Թոռն․, էջ 76—ում ենթական «ծանրաբեռն ծանրութիւն»—ն է. հաւանական է, որ ենթական մեղրն պիտի լինի, որ մէկ ձեռնադրում է (եւ ոչ թէ մեղերն «սեռականն»)․ նրան է վերաբերում նաեւ հեղուցու—ն:

299. 267. 2 «Զոր ունին իւրաքանչիւր ազգացն թռչնոցն բնութեամբ»․ նախադասութիւնը ենթակայ չունի. երկու ձեռնադիր ունի ազգք, երկուսը՝ ազգքն, դուրէ բնութեամբ բառից առաջ: Տպ—ը եւ Թոռն․, էջ 77, ունեն յիւրաքանչիւր ազգաց բացառականը, որն անհրաժեշտ է սեռականի փոխարէն: Թոռն․, էջ 77, ծան. 1—ում ենթակայ է Համարել (թռչունք)—ը:

300. 267. 9 «Որ եղեւ ի վերայ նորա ընկերէն»․ առանց նախդրի բացառական չի լինում. ուստի Թոռն․, էջ 77—ն իրաւամբ ունի յընկերէն, եւ ծան. 3—ում ասուած է՝ «Ըստ այլ օր. դրինք՝ յընկերէն. — Տպ. ընկերին»: Մէկ ձեռ. էջատակում ունի յընկերին, որ յընկերէն ուղիղ ձեւի աղաւաղումն է:

301. 268. 8 «Պատերազմն ուրեմն առնեն»․ տպ. եւ Թոռն․, էջ 76, ունեն նոյն պատերազմն որոշեալ յօդով Հայցականը, որ անկարելի է, եթէ Հայցականը չունի գ— նախդիր: Վայ պատերազմ առնել դարձուածքը. արդ, չորս ձեռ. ունեն պատերազմ անորոշ Հայցականը, իսկ Հինդն էլ՝ պատերազմս յոգնակի անորոշ Հայցականը, որ դարձեալ կարող է տեղին ընենել:

302. 268. 16-17 «Ոչ կամին ընդունել ընդ յարկաւ զազգակիցս իւրեանց ի ժամանակ ձմեռայնոյ»․ սպւր եւ Թոռն․, էջ 78, նոյնպէս ունեն ի ժամանակ, որ անկարելի է ներգոյականի իմաստով․ ուղիղն է ի ժամանակի․ ձեռագրեր ունեն ի ժամանակս, որ նոյնպէս ընդունելի Կ: Յաղորդ գիշերի իմիք-ը փանազարում է ի ժամանակ-ը Թարգմանել «ժամանակուայ համար»:

303. 269. 1-3 «Գարձեալ մառք ճայից, ծերացելոց հինաւորէից հոգաբարձութիւնն, որ անդէն ի նոցունց նոցին լինի, բաւական է լինել որդւոցն ի պատուել զհարս...»․ նոյնը՝ սպւում եւ Թոռն․, էջ 78: Ո՞ր բառն է բաւական է-ի ենթական: Երկու ձեռագիր ունեն էին, որով ենթական կը լինէր մառք-ը, ըստ որում հոգաբարձութիւնն կը լինէր [հոգաբարձութեմէ] կամ [հոգաբարձութեմ], մառք-ի փնդիրը: Եթէ մառք-ը դուրս հանուի, բաւական է-ի ենթական կը լինի հոգաբարձութիւն-ը: Բաւական է լինել-ը պահանջում է [արիմակ] բառը, որ Թոռն-ը տրել է ( )-ի մէջ, բայց կայ չորս ձեռագրում․ ուստի պիտի լինէր բնագրում:

304. 274. 14-15 «Բոյն դարձեալ յերկիր դնէ»․ ուղիղն է հինգ ձեռ-ի յերկրի ներգոյականը, ինչպէս պահանջում է դնել բայը․ վկայութիւնները բազմաթիւ են․ «Եղ ի կուածոյ գերեզմանի» (Ղուկ ԻԳ 53):

305. 277. 2 «Աչք հաւայտանն գիշերոյ ողջ են առ ի տեսանել»․ մէկ ձեռ․ ունի գիշերի, որ տարածուած է որպէս ժամանակի պարագայ, Թէեւ ուղիղն է ի գիշերի, սակայն ոչ լոկ գիշերոյ տրականը:

306. 278. 9-10 «Ի պատրաստութենէ զինուցն եւ ի զարդուցն նշանաց եւ միշտ զրահս ընդ անձն անկանելոյ իմանան»․ Երեք ձեռ․ ունեն արկանելոյ բայը, որ այստեղ գրաւս րատի կողքին նշանակում է «հազնել» (տե՛ս ՆՀԲ, արկանել բառայուրուածը)․ նրան պահասում է [յ-] նախդիր՝ [յ]արկանելոյ, բացառական, ինչպէս ի պատրաստութեմէ եւ ի զարդուցն, որպէս իմանամ ստորոգեալի բացառ. փնդիրը:

307. 280. 10 «Ձիք ինչ, գոր յԱստուծոյ կազմեալ փոջ»․ այս բայը կրաւորական սեռի է յԱստու[ա]ծոյ բացառականի պատճառով, եւ գոր հայցականը պիտի լինի որ, ուղղական, ենթակայ:

308. 281. 14 «Ձաւր մի ողջոյն չէ բաւական առ ի պատմել զըսքանչելիսն»․ ուղիղն է ձեռագրերի ար ուղղականը որպէս ենթակայ:

309. 282-283. «Դուք՝ կանայք, յորժամ նստիցիք մանել կամ անկանել զմետաքս նորա, յիշեալիք զմտաւ ածել զյարուլթիւնն եւ զնորոշումն ի մեռելոց, քանզի յայնմ գեոնոյ, որ կողի շէրաս, այսինքն կերպասաբեր, գամնէ զվաստակի նոցա ի հանդերձս կակուղս»․ ո՞վ է գամնէ-ի ենթական․ ի՞նչ այլանդակութիւն կամ վրիպակ է զվաստ-

տակի յողնակի ուղղականը գ- նախդրով, որի փխ սպ-ն ունի զվաս- սակս : Ովքե՞ր կամ ինչե՞ր ան մոցա յողնակի սեռականը : Գանձ-ն կարող է եղած լինել զանձէ (չուք՝ կանայք) . ուղիղն է զվաստակս հարցականը : Նոցա-ն կարող է լինել յայնմ գեռնոյ հղակիի փխ որոչ ձեռագրերի ունեցած յայնց գեռնոց յողնակիի համապատասխան մը- նացուկը . եթէ ընդունուով է յայնմ գեռնոյ հղակին, ապա սխիտի լինի մոքա : Յունարէն բնագիրը կարող է օգնել խնդրի լուծման : Նկատենք որ յաջորդ տողում (4-6) ունենք «Աղբի արդի փոփոխմամբ, որ դատանին փ կերպասագործ գեռունս, աւջուք աւրինակ մեծի յարու- թեանն» յողնակին : Որով յայնց գեռնոց յողնակին այնքան էլ մեր- ժելի չէր :

310. 284. 13 «Եթէ թոյլ տաց ևւ արձակեցից զձեզ ի սլարկեչտ ժողովոյս յեկեղեցւոյ» . նախընտրելի է եկեղեցւոյ սեռականը . ձե- րագրեր ունեն եկեղեցւոյս, եկեղեցւոյս :

311. 284. 14-16 «Կէսք ի ձէնջ ի լիցս ընթանան, ևւ իէսք՝ ի տա- պեղեղումնս, ուր ստուգիւն է ևւ անկարգ յամառութիւն՝ հանդերձ չահասէր ասպականութեամբ, որ մովիմ մփիմ սկեմ» . ովքե՞ր են որ-ը, ի՞նչ են մովիմ-ը ևւ մփիմ-ը, նախադասութեան ո՞ր բառերին են փո- խարինում : Ի՞նչ գործ ունի սկեմ «հսկում են» բայը : Ձեռագրեր ու- նեն մամն իսկ եմ, ևւ յարմար ենք համարում Գ . Նահապետեանի «ևւ որ նոցին նման իսկ ան» սրբագրութիւնը (էջ 240), որ նշուած է բնագրակազմողի Ը գլխի ծան . 63-ում : — Տապեղումնս-ի յօշն աւելորդ է . ձեռագրեր ունեն տապաղումնս ևւ տապեղումնս . բա- րարանները՝ տապաղումնս, որ ճիշտն է՝ -ու- :

312. 286. 10-13 «Այն, որ ևտ մեզ յամենայն մեծութեանց, որ յաճախեալ կայ յարարածս, նոյն տացէ զիւր սքանչելեացն, որ ի մերում անձինս տնկեալ հաստատեալ կան, նկարել ղյիշատակն նորա սու մեզ» . ըստ մեզ՝ առաջին որ-ի յարարեթեալը նախորդ մեծու- քեանց-ն է, ուստի ուղիղ է երեք ձեռագրի կամ յողնակին, կայ-ի փոխարէն : — Ըստ մեզ՝ նկարել-ը կրաւորական ստոխ է, ու «ենթա- կան» նախորդ զիւր սքանչելեացն դոյազանի իմաստն է . ուստի տացէ-ի հետ սխիտի ունենանք տրական՝ իւրոց սքանչելեացն . զիւր-ի փխ . ձեռագրեր ունեն զի եւ ի, զի ի : Նախընտրելի է երեք ձեռագրի սքանչելեացս, -ս յօղով, քանի որ սքանչելիքները չի մերում ան- ձինս հաստատեալ կան» :

### ՃԱՌ Թ

313. 289. 3-5 «Ասացին ոմանք ի յունաց ալլարդս ևւ զճառս աշ- խարհիս գրեցին, ևւ զկերպարանս երկրի գրողմեցին ըստ կամաց իւրեանց : Զգիցիմք երթալ զհետ նոցա» . վերջին նախադասութիւնն

ասողը Բարսեղ Կեսարացին է, որով այնպէս է ստացւում, թէ նա հետեւելու է յոյն իմաստունների կողմից Երկրի մասին ասուածիներին, որ մերժում է Մէկ ձեռագիր ունի չգիտիցիմք, որը ձգգիցիմք-ի սղաւաղումն է: Սխալ չէր լինի ձգգիցիմք հետտրական հարցումը:

314. 289. 10 «Յայտ ամենայնէ կարծեացն իմաստնոցն յունաց...» ուղիղն է ամենայն, եթէ սա կարծեացն անդամի որոշիչն է: Եսկ եթէ յայտ ամենայնէ-ն բուն դերանուն է (յայտ-ը՝ ամենայնէ-ի որոշիչը), ապա կարծեացն պիտի լինէր, [ի] կարծեացն՝ «կարծեցնների այս բոլորից», որ չենք կարծում: Ամենայն բառի նոյնպիսի մի սխալ ձեւ տե՛ս դիտ. 284-ում:

315. 289. 17-18 «Ո՛չ Եթէ կերպարանաց եւ զչափոց աշխարհիս փոյթ եղև պատմել» ուղիղն է երեք ձեռագրերի զկերպարանաց գ-նախղրով քացառականը, ինչպէս զչափաց, որպէս պատմել բայի խնդիր:

316. 290. 10-12 «Ամենայն ինչ, որ տուաւ մեզ ի նմանէ գրովք ի շինուած հոգւոց ևւ յաւգուտ կենաց են» ուղիղ է է, եզակի ինչպէս տուաւ: Հմտ. 295. 3 «Եղև ամենայն ինչ»:

317. 290. 14 Ունառեցամ. բառարաններն ունեն լոկ ունառեմ չէգոր բայը, ոչ ունառիմ: Տպ.ի ունառեցիմ-ը չկայ այստեղ էջատակում նշուած:

318. 290. 15-17 «Ձուղղագիր պատգամս զբոց եղծանել հնարեցան կամակորութեամբ, եւ փոխանակ նոցա զիւրեանց զնել ջանացին, փբրու թէ իւրեանց կարկատուն բանքն աւելի...» բանքն որոշեալը (-ն յողով) նախընտրելի է զարձնում -ն յողով զիւրեանցն փոխանուն սեռականը, որ ձեռագրերում է:

319. 291. 8-13 Մի նմուշ քնագրակազմողի կէտադրութիւնից. «Պործն ցայտմ եւ կարգի վայ յամենայն ազգ զեռնոց, եւ մինչեւ ի կատարումն աշխարհի նոյնպէս կայ մնայ յարարածս: Եւ որպէս յորժամ ընկենուցու ոք դոմոգ ի դետին եւ տիպեացի զառ ի թափ տեղի ոչ դադարիցէ ի գնացից մինչեւ ստացէ հարթ տեղի, եւ զետղ առեալ՝ անդ դադարեացի, սոյնպէս եւ քնովթիւնքն, որ եղան ի միողէ հրատրելի է երեք ձեռ-ի ազգ յոգնակին:

320. 291. 13-14 «Պան եւ կարգին ազգ նոցա ի ծնունդ» նախընտրելի է երեք ձեռ-ի ազգ յոգնակին:

321. 292. 14-15 «Անդատին յերկրէ բոլրեալ են կենդանութիւնն իւրեանց» յետքը թուղունների մասին է. եթէ բոլրեալ են-ը ներգործական է համարուել, ապա կենդանութիւնն չի կարող հայցական լինել առանց գ- նախըրի, քանի որոշեալ յող ունի: Ըստ մեզ՝ կենդանութիւնն ուղղական եւ ենթակայ է, ուստի ձեռագրերն ունեն բոլրէ

և ք[ս]է (որ նախընտրելի ուղղագրութիւն է) եղակին, որ ուղիղն է : Սխալ չէ նաև ք[ս]եալ է, որ չկայ ձեռ-երում : Գուցէ եւ «ք[ս]եալ [է] [ի] կենդանութիւն իւրեանց», իւրեանց-ի պատճառով :

322. 293. 7-9 «Ձիւք մժողոյ եւ մժղկի արկանել ձուս եւ ոչ ալլ ինչ, յորոյ կարգիցի աղչն իւրեանց» . յորոյ-ն քերականօրէն անկապ է . ընդունելի կը լինէր յորմէ . ձեռագրեր ունեն որով, որ միանդամայն տեղին է :

323. 295. 13-14 «Այս ամենայն, որ երկրորդեցաք զանասունս հանդերձ ալլ հևս բաղում անասնովք, միանդամայն ի միասին եկին լինել» . որ յարբերականը եւ զանասունս փոխած են լինում իրենց տեղերն ու հոլովները՝ «Այս ամենայն [անասունք], [զ]որ[ս] երկրորդեցաք, հանդերձ...» : Բայց ձեռագրեր ունեն զանաւանս, փիլ զանասունս, զորոց, որ զորոց-ի աղաւաղումն է, և քանի որ հեղինակը Երկրորդել կամ կրկնել է ոչ թէ անասուններին, ալ՝ նրանց անունները, ապա քննարկը կարող է եղած լինել «Այս ամենայն, զորոց Երկրորդեցաք զանաւանս, հանդերձ... [եկն] (այս ամենայն ենթակայով) [ի] (որ մէկ ձեռագրում է) լինել» :

324. 296. 13-15 «Արջ ծանրանդամ է մարմնով եւ անհեղեղ զնացս ունի առանձինն՝ փորել եւ որջամուտ սեպթ լինել յաւտօրէ» . առանձինն բառը, (՝)-ով, վերաբերում է ունի-ի<sup>օ</sup>ն . էութիւնը հասկանալի չէ : Նախընտրելի է տպ-ի եւ ձեռագրերի անձինն : Կամ էլ (,) պիտի դրուէր առանձինն բառից առաջ, որպէսզի վերաբերի յաջորդ բայերին :

325. 297. 17-18 «Աւձից աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտ շում-բայ [... ] և ողջանան» . երթայ եւ ուտ ձգակիները պարտադրում են : Երեք ձեռագրի աւձի եղակին : Նախորդ ստղերում հեղինակը եղակի թուով է խօսել արջի, աղուէսի, ջրային կրիայի մասին :

326. 303. 4-7 «Ճի քաղմահոյլ խաչանցն ի միջի անհամար դառնինքն դռոյթ տուեալ՝ դրդեալ իւրանն յիւրաքանչիւր արգելանաց, և ամենեքին զձայն իւրոյ մաւրն անվրէպ մամաչէ, առ նոյն ընթանայ եւ ալլ ուրեք ոչ խոտորի», որից յետոյ խօսուում է մէկ գառան մասին : Ամենեքին յոգնակի ենթակայի հետ միանդամայն անընդունելի ան զգակի թուի ստորագնաները, կամ՝ ընդհակառակը : Ձեռագրեր ունեն մամաչի, մամաչիմ, խոտորել, տպ-ն ունի ընթանայ, որ չկայ նշուած : Բնագրակազմողին էր մտում նախագատութիւնը դասական քերականութեան համեմատ շտկել, օգտուելով նաև յուն բնագրից :

327. 305. 1-2 «Շուն գայս գիւտս յիւրոյ բնութեանց վարժից ըստացեալ ունի» . մէկ ձեռ . ունի յիւրոց, ձեռագրեր ունեն բնութեանց : Թոռն . , էջ 88՝ «յիւրոց քնութեանց վարժից» եւ ծան . 2՝ «վարժից,



ընդ մեծութիւնը զաւրուութեան փղի կամ ընդ այլ եւս մեծամեծ անասնոցն՝ (փոխանուն սեռական. ՄՄ) որպէս զարմամալ ընդ միան եւ ընդ միտոյ (փոխանուն սեռականներ. ՄՄ) [...] եւ ընդ նուրբ խայթոցն կարճի»: Այս ընդ-ների փիւ ձեռագրերում շկայ ի նախըրբ, որ սխալ վը լինէր:

334. 312. 17-313 «(Զարմանամ) ընդ նուրբ խայթոցն կարճի, թէ զիարդ կորացեալ եւ կրկնեալ կազմի հարկանել ըստ աւրինակի ման եւ վոր կերպարանաց փողի, եւ զիարդ արկանեմ զթոյսն յայնոսիկ, որ հարկանենն». արկանեմ-ի ենթական եզակի թուի կարնի բառի լուերեալն ձեւ կարին-ն է, որը պահանջում է հզակի ստորոգեալ՝ արկանէ կամ արկանէմ:

335. 315. 7 «Յարարածոց իւրոյ անձինն իմացաւ». ճիշտն է յարարածոյ, ինչպէս 317. 8-9 «Յորժամ սկսանիցի երեւել արարած մարդոյն...»:

336. 315. 13-14 «Զնշանակ իւրոյ նշուղիցն». ուղիղն է իւրոց:

337. 315. 14 «Յայսմ ընթերցումածոց». ուղիղն է չորս ձեռ-ի ընթերցումածոյ եզակին ըստ իմաստի, որովհետեւ տ. 9-10-ում կարգում ենք Ծն Ա. 26-ը՝ «Արասցուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց» տողը, իւր ըստ յայսմ եզակի որոշիչի:

338. 315. 18 «Ինքն ընդ իմիմ խաւսեցաւ». «հետ» նշանակելու համար ընդ-ը եզակիում դործածուում է հզակի տրականի հետ (բացի ես-ից). ուստի՝ ընդ իմիմ[եայ]ն: 316. 9 «Զ է ինչ պատշաճ, թէ ինքն ընդ իմիման խաւսեցի»:

339. 316. 13 «Վարդապետ իւրոյ կամացն». ուղիղն է իւրոց. կամացն թէ եւ անեղական է, բայց պահանջում է յոդնակի որոշիչ ստացական ածական թեք հոլովներում:

340. 316. 15-16 «Ինքն ընդ անձին խաւսեցի իբրեւ ընդ այլոյ». ձեռագրեր ունեն այլս, որ յարմարն է, քանի որ եզակիում պիտի լինէր ընդ այլում: 316. 5 (շարքնի կամ հիւսնի մասին)՝ «ինքն միայն առանց ընկերաց նստիցի, ինքն ցինքն ասիցէ՝ արասցուք դանակ կամ արկցուք արաւը»: Աստուած էլ ասել է «Արասցուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց» (317. 6-7), յոդնակիաձեւ: Կարծես բոլորն էլ մենակ, բայց ուրիշների հետ խօսելիս լինեն:

341. 318. 10 «Առ նա մաւտ կային». ուղիղն է ներդոյականը՝ առանց տեղափոխութեան իմաստի կային բայի հետ ձեռագրերի միւս տրականը առ նախըրբի հետ: «Նղարք նորա՝ մաւտ առ նմա» (Նեեմի ժԲ 24):

342. 318. 16-17 «Մարդ ի պատուոյ Հրեշտակաց չէ ինչ հեռի հասանել» . հասանելը պահանջում է ի նախըրոյ Հայցական՝ պատիւ , որ ձեռագրերում է : Ի պատուոյ բացառականը գրուել է հետի-ի պատճառով :

343. 321. 10-11 «Որ արժանի արար զքեզ արարածդ» . չորս ձեռագրեր ունի զարարածը որուեալ Հայցականը . բացայայտիչը գրուում է բացայայտեալի հոլովով եւ նախըրով :

Մեր կողմից նկատուած վրիպակներ

Հատորի վերջում բնագրից նշուած են եւ ուղղուած չորս վրիպակ : Մենք նկատեցինք հետեւեալները , բացի մեր ղրտողութիւններում «վրիպակ համարուածներէց .

	ՏՊՈՒԱԾ Է	ՈՒՂԻՂՆ Է
էջ 9, տ . 11	Ի մէջ	Ի մէջ
14. 2, 19.10	ընթանա	ընթանայ
14. 4	չիցէ	չիցէ <sup>o</sup>
22. 1	համբառնա	համբառնայ
22. 2	վերանա	վերանայ
28. 10	թուլանա	թուլանայ
30. 5, 31. 3	զո	զոյ
98. 5	վարժեն	վարժեն
103. 19	խնէին	խնէին
114. 2	մոտ	մաւտ
114. 6	որոնց	որոց
167. 10	ելէ <sup>o</sup> ր	ելե <sup>o</sup> ր
178. 8	դի (այլուր ԽԱ)	դի
235. 8	ո <sup>o</sup> րոյ	որո <sup>o</sup> յ
259. 13	յաւչէն	յաւչեն
286. 2-3	ուրախարար զձեզ աստուածեղեն	ուրախ արար զձեզ աստուածեղէն
288. 5		զեռնոյ
305. 2	զեռնոյ	արկեր
321.7	արկեր	նման է
321. 8	նման է	

Եզրակացութիւն

1. Ձեռագրերի այլընթացումները նշուած են էջատակում «որոշակի ընտրութեան եղանակով» . արդ , վեներտիկեան տպագրով բազմիցս անդրադարձանք , որ «կարեւոր» այլընթացուածներ չեն յիշատակուել . ո<sup>o</sup>վ կարող է երաշխաւորել , որ ձեռագրերի հետ նոյնպէս

չի վարուել բնազդակազմողը: Այս արատաւոր եղանակը արգելք է հանդիսանում, որպէսզի ընթերցողները կարողանան դիտողութիւններով բարելաւել քննական բնազդը, քանի որ, ինչպէս համոզուեցինք, Կիմ Մուրադեանի դասական դրաբարից ունեցած դիտելիքները թերի են: Բացի այդ, տարընթերցումները նշուած են ոչ միշտ յստակ եւ հասկանալի ձեւով:

2. Կիմ Մուրադեանը չի տիրապետում փրեւանեան կէտադրութեան յստակ կանոններին, որոնք խախտուած են բազմատեսակ ձեւով, եւ խախտումները յաճախ են վսանդարում:

3. Կիմ Մուրադեանը, որ շատ մեծ աշխատանք է կատարել, լիապէս է վիճակի չի եղել պատրաստելու դասական մի բարդ եւ շատ խանդարուած բնազդի քննական հրատարակութիւնը: Նա թերացել է նոյնիսկ տարրական շարահիւսական հարցերում եւ բնազդը է ներմուծել մերժելի ընթերցումներ:

4. Այս հրատարակութիւնը շատ հեռու է բաւարար լինելուց եւ կարող է շատերին թիւրիմացութեան մէջ դրել դասական դրաբարի շարահիւսութեան տեսակէտից. ուստի զդուշալի է: Անհրաժեշտ է բնազդը խորապէս վերանայել եւ բարելաւել: Թող չկարծուի, թէ մենք Կիմ Մուրադեանի վատն ենք ուղում մեր դիտողութիւնների մի մասը միայն հրապարակելով. ընդհակառակն:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

ԺՆԵՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Résumé****REMARQUES SUR LE TEXTE CRITIQUE ARMÉNIEN  
DE L'HEXAMÉRON DE BASILE DE CÉSARÉE****MARTIROS MINASSIAN**

Université de Genève

Kim Mouradian a publié à Erévan, en 1984, le texte critique en arménien classique de l'Hexaméron de Basile de Césarée, après avoir dépouillé 20 des 31 manuscrits conservés. L'édition comporte un avant-propos, une introduction, le texte arménien avec un appareil critique, des notes et des lexiques, mais l'auteur de l'article n'a examiné que le texte et ne fait part que d'une partie de ses remarques textuelles. Il conclue que l'apparat critique est composé d'un certain choix de leçons, le texte est entaché de nombreuses fautes de syntaxe, de mauvaises leçons, souffre d'une ponctuation aberrante, l'auteur du texte n'étant pas assez préparé pour ce genre de publication extrêmement difficile et nécessitant un savoir profond de la grammaire de l'arménien classique. Le texte est à revoir entièrement et profondément. On se gardera d'en citer des exemples, sans un choix sévère, dans des études linguistiques.